



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2018 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ.....	6
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.....	10
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՈՒՄ.....	17
ԲՅՈՒՋԵ.....	20
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ.....	22
ՍԵՆԳՈՐԻԱՄԲԻՈՆ.....	24
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ.....	31
ԵՎՐՈՊԱԿԱՆ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ.....	34
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	38
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՑՔՆԵՐ.....	42
UFAR20+ ԿԱՄՊՈՒՍ.....	47
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....	51
ՏԱՐՎԱ ՀԻՇԱՐԺԱՆ ՊԱՀԵՐ.....	59
ԽՈՍՔՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՑ.....	66

ՆԱԽԱԲԱՆ



Ժան-Մարկ ԼԱՎԵՍԵ

Հայաստանում ֆրանսիական համալսարանի ռեկտոր

2018թ. հոկտեմբերին Երևանը հյուրընկալեց Ֆրանկոֆոնիայի XVII-րդ գագաթնաժողովը, որը հազեցած ժամանակաշրջան էր աշխատանքային թիմերի, համալսարանի և հատկապես մեր ուսանողների և շրջանավարտների համար: Ավելի քան 400 ուսանող և շրջանավարտ հավաքագրվեցին ՀՀ Արտաքին Գործերի Նախարարության կողմից ֆրանկոֆոն պատվիրակություններին, այդ թվում Ֆրանսիայի հանրապետության Նախագահ Է. Մակրոնի պատվիրակությանն ուղեկցելու համար: Հիշեցնենք, որ արդեն 4 տարի է, ինչ Հայաստանում

ֆրանսիական համալսարանը ողջ ներուժը կենտրոնացրել է իր ռազմավարական ծրագրի իրագործման վրա:

2017թ. հուլիսի 7-ին հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված այս ռազմավարական ծրագիրը բաժանվում է 5 ուղղության.

- Ուղղություն 1. Հետազոտությունը՝ որպես ՀՀՀՀ-ի զարգացման խթան
- Ուղղություն 2. Կառավարման արդիականացում
- Ուղղություն 3. Տնտեսական ոլորտի կարիքների կանխատեսում

- Ուղղություն 4. Ֆրանկոֆոնիա և միջազգային գրավչություն
- Ուղղություն 5. ՀՀՀՀ-ի շրջանավարտներն ու հանրահռչակումը

Այսպիսով, 2018-2019 ուսումնական տարին Նպատակաուղղվել է այս ծրագիրը խորապես իրագործելու և այն տարբեր ուղղություններով տեղայնացնելու համար: Այսօր ՀՀՀՀ-ն տարեցտարի համբավ է վաստակում ոչ միայն Հայաստանում և Ֆրանսիայում իր կրթության որակի և հայ և ֆրանսիացի դասախոսական կազմի, քննակեղծիքի դեմ պայքարի, աշխատաշուկայում առկա աշխատատեղերի պահանջները բավարարելու և բարձր միջազգային տեսանելիության շնորհիվ, այլ նաև ուսանողների շնորհիվ՝ օժտված մասնագիտական Նախագիծը բարձր որակով կառուցելու և հաջողելու խոր մղումով:

Տասներկուամյա կրթության անցնելու հետևանքով Հայաստանի բոլոր համալսարանների դիմորդների քանակի նվազմամբ պայմանավորված՝ երկու բարձր տարիները հաղթահարելուց հետո, 2019թ. սեպտեմբերին՝ ուսումնական տարվա մեկնարկին ՀՀՀՀ-ի ընդունելության մրցույթին գրանցված 474 դիմորդից ներկա էր 374-ը, ինչը համալսարանում երբևէ եղած ընդունելության ամենաբարձր ցուցանիշն է: Իհարկե, բաց թողնված տարիների լրացումը ՀՀՀՀ-ից կպահանջի դեռևս 3 տարի, սակայն նրա տնտեսական մոդելը կայուն է և հնարավորություն է տալիս հուսալի կանխատեսումներ անել իր ֆինանսական

կարողությունների վերաբերյալ՝ հետագա զարգացման ծրագրերին աջակցելու համար: 2018-2019 տարին նշանավորվեց նաև ՀՀՀՀ-ի տեղափոխման Նախագծի պաշտոնական մեկնարկով, Նախագահ Է. Մակրոնի բարձր հովանու ներքո դրամահավաքի ստեղծմամբ, ինչպես նաև համալսարանի կանոնակարգերի բարեփոխումներով: Վերջապես, շրջանավարտների աշխատանքի տեղավորման ուսումնասիրությունը, որը մենք իրականացնում ենք մասնագիտական մոտեցմամբ և ճշգրտությամբ, ստացել է գերազանց տվյալներ, որոնք վկայում են մասնագիտական ոլորտում մեր երիտասարդ շրջանավարտների բարձր պահանջարկի մասին:

Բոլորին մաղթում եմ բարի ընթերցում և ևս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում մեր Համալսարանի զարգացման գործում ցուցաբերած Ձեր աջակցության համար:

“

Այսօր ՀՀՀՀ-ն տարեցտարի համբավ է վաստակում ոչ միայն Հայաստանում և Ֆրանսիայում իր կրթության որակի և հայ և ֆրանսիացի դասախոսական կազմի, քննակեղծիքի դեմ պայքարի, աշխատաշուկայում առկա աշխատատեղերի պահանջները բավարարելու և բարձր միջազգային տեսանելիության շնորհիվ, այլ նաև ուսանողների շնորհիվ՝ օժտված մասնագիտական Նախագիծը բարձր որակով կառուցելու և հաջողելու խոր մղումով:


1

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ

2018թ. սեպտեմբերին, ունենալով 153 ուսանող՝ 2018-2019 ուսումնական տարին ամենասակավաթիվն էր գրանցված Նոր դիմորդների առումով: Այնուամենայնիվ, այս թիվը բացասական ազդեցություն չունեցավ ՀՀՀՀ-ի Նախատեսված բյուջեի

վրա, որը հաշվարկվել էր՝ հաշվի առնելով ընդունելության ցածր ցուցանիշը: Այդ երևույթը պարբերական էր, դա վկայեց նաև 2019թ. ընդունելության ցուցանիշը, երբ ուսումնական տարին մեկնարկեց 374 Նոր ընդունված ուսանողներով:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԾԽՈՒՄՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ



ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԾԽՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՌԻ

790
ԱՂԶԻԿ

360
ՏՂԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ
1150


2018թ. Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի գագաթանաժողովը իր ազդեցությունն ունեցավ դասերի ընթացքի վրա՝ Ներքաշելով ավելի քան 450 ուսանող այդ միջազգային իրադարձությանը:

Գրեթե երկու շաբաթ դասերը չեղարկվեցին՝ լրացվելով Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում:

Այնուամենայնիվ, 2018-2019թ. Նշանակալի էր հատկապես Նոր ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկայի (ԻԿՄ) ֆակուլտետի բացումով՝ 2018թ. սեպտեմբերին ունենալով 11 ուսանող: Ինչպես Նշեցինք, հաշվի առնելով տվյալ տարվա համար դիմորդների ցածր ցուցանիշը, ուսանողների այս թիվը չի բնութագրում տվյալ ոլորտի զրավչությունը և այս Նոր ուսումնական ծրագրի խթանմանն ուղղված աշխատանքի արդյունքները տեսնելու համար հարկ կլինի սպասել 2019-2020թթ-ին: Համագործակցելով Փոլ Սաբատիե Թուլուզ 3 համալսարանի հետ՝ Բակալավրիատի առաջին կուրսից կրթական ծրագիրը Նախատեսում է Նորարական և ձեռնարկատիրական Նախագծերի իրականացում Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հետ: «Ծրագրի կառավարում» մոդուլը մեկնարկել է 2019թ. սկզբին՝ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում: Դա ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «convergence» կենտրոնի սկիզբն է, որը կգործարկվի երեք տարվա ընթացքում և կգտնվի ԹՈՒՄՈ-ի տարածքում: Կրթական Նորարարությանը աջակցելու Նպատակով բոլոր կամավոր ուսանողների համար բացվել է «ձեռնարկատիրական» մոդուլ ֆրանսիացի դասախոսների կողմից տրամադրված երեք մոդուլների տեսքով,


որը ֆինանսավորվում է Իլ Դը Ֆրանս տարածաշրջանի ՀԲԸՄ-ի և ESCP առևտրի դպրոցի դրամաշնորհների միջոցով:

Վերջապես, գիտահետազոտական ուղղությունն ամրապնդելուն ուղղված համատեղ ջանքերի արդյունքում ունեցանք երկու Նոր դոկտորանտ՝ իրավաբանական ֆակուլտետում արհեստական բանականության և Մարքեթինգի ֆակուլտետում «մեծածավալ տվյալների» («big data») վերաբերյալ գիտական աշխատանք կատարելու համար:



Նախագծի կառավարման մոդուլը ԹՈՒՄՈ-ում

ԲԱՇԽՈՒՄ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ



ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Նախնական ծրագրի ստեղծումից ի վեր ՀՀ-ի հենարանը՝ Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանն է, որը նրան հնարավորություն է ընձեռում փայլել այսօր Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Միջազգայնորեն շատ ակտիվ Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանն ունի իրավաբանության, Կառավարման, Փիլիսոփայության, Լեզուների, Գրականության և Մշակույթի ֆակուլտետներ, ինչպես նաև տեխնոլոգիայի համալսարանական ինստիտուտներ: Համալսարանը շնորհում է տասնյակ ապակենտրոնացված դիպլոմներ և կրկնակի դիպլոմներ բազմաթիվ եվրոպական և օտարերկրյա համալսարանների հետ համագործակցությամբ, սակայն ՀՀ-ը իր 1000-ից ավել կրկնակի դիպլոմ ունեցող ուսանողների հետ Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի

ամենակարևոր միջազգային ապակենտրոնացված կենտրոնն է: Խթանելով Ֆրանկոֆոնիայի տարածմանը՝ այս երկու հաստատությունները սերտորեն համագործակցում են մանկավարժական, հետազոտական աշխատանքներում, ինչպես նաև Սենգորի ամբիոնի և եվրոպական այլ ծրագրերի շրջանակում:



ՀՀ-ը շնորհակալություն է հայտնում Լիոն 3-ի ողջ անձնակազմին, մասնավորապես Նախագահ Պրոֆեսոր Ժակ Կոմբիին, միջազգային հարաբերությունների փոխնախագահ և իրավաբանական ֆակուլտետի դոցենտ Գիյոմ Ղուսեին, և Մարքեթինգի և Կառավարման ֆակուլտետների դոցենտ Ժան Բատիստ Կարտիեին:

2018-2019 ուսումնական տարին նշանակալի էր նոր՝ ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա ֆակուլտետի բացմամբ Թուլուզի Փոլ Սաբատիե III համալսարանի հետ համագործակցությամբ:


Օղակացության և նոր տեխնոլոգիաների արդյունաբերությամբ հայտնի Թուլուզի շրջանը SS-ի հետազոտության տեսակետից ամենադինամիկն է, մասնավորապես՝ շնորհիվ Թուլուզի SS հետազոտական ինստիտուտ (IRIT), որը Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ երկարամյա գործընկեր է:

դասախոսներ են ժամանել ուսանողներին անգլերենով վարպետության դասեր ներկայացնելու: ՀՀ-ը շնորհակալություն է հայտնում մասնավորապես Պրոֆեսոր Ժան Պիեր Վինելին, Թուլուզի Փոլ Սաբատիե III համալսարանի Նախագահ Միշել Դայդեին, Թուլուզի SS հետազոտական ինստիտուտ (IRIT)-ի տնօրեն Ալեն Կրուզիլին, ինֆորմատիկայի ստորաբաժանման ղեկավարներ Իլեանա Օբերին և Պիեր Անրի Կրոսին՝ նոր ֆակուլտետի բացմանն ուղղված աշխատանքներում նրանց աջակցության և ներդրման համար:

Չնայած, որ ֆրանսերենով դասավանդումները սկսվում են ուսումնական 3-րդ տարվանից, ինչպես մյուս ֆակուլտետներում է, Թուլուզից արդեն իսկ



ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ (ՆԱԽՈՐԴ ՏԱՐԿԱ ՀԵՏ)



2

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2018-2019թթ. մեր թիմը համալրեցին երկու նոր դոկտորանտներ՝ աշխատելու այնպիսի ակտուալ թեմաների շուրջ, ինչպես արհեստական բանականության ուղղված կիրառվող օրենքն է և «մեծաքանակ տվյալները»: Այսպիսով, ՀՖՀՀ-ի դոկտորանտուրայի բաժինն ունի 13 դոկտորանտ, որոնցից վեցը գիտական թեզի երրորդ կուրսում են, հինգը՝ երկրորդ, և երկուսն էլ՝ առաջին: Այս ուղղությունը կարևոր է համալսարանի համար, քանի որ մենք աշխատում ենք ստեղծել ֆրանսիական հետազոտական լաբորատորիաների հետ սերտորեն կապված ֆրանս-հայկական դասախոսական կազմ: Ինչպես նախորդ տարի, իրավունքի և կառավարման

ուղղությամբ մեծ դերակատարություն ունի ֆրանսիական դոկտորական դպրոցների՝ մասնավորապես Լիոն 3-ի աջակցությունը: Անհրաժեշտ է հայկական կողմի վստահ գործելակերպը, և հատկապես նախագահ Կոմբիի աջակցությունը, որպեսզի ՀՖՀՀ-ի դոկտորանտների որակը ըստ արժանվույն գնահատվի և հաղթահարվի որոշակի կարծրատիպեր: Մեր բոլոր դոկտորանտները կատարել են երկամսյա այցելություն ֆրանսիա, որտեղ նրանք մասնակցել են դոկտորական դպրոցների գործունեությանը, հետազոտական կենտրոնների աշխատանքներին և սկսել են մշակել իրենց առաջին հոդվածները:



ՀՖՀՀ ԴՈԿՏՈՐԱՆՏՆԵՐԸ

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
իրավաբանական գիտությունների դոկտորանտ

Michel de l'Hospital (EA 4232) գիտահետազոտական կենտրոն
Տնտեսագիտական, իրավաբանական և քաղաքական գիտությունների դոկտորական դպրոց ED 245 (Clermont-Ferrand)

ԹԵԶԻ ԹԵՄԱ՝
Հայաստանի և ֆրանսիայի օրենսդրական գործընթացի համեմատական վերլուծություն

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
Հայաստանի ֆրանկոֆոն փաստաբանների միություն, Էյֆելի գերազանցության կրթաթոշակ

ԳՈՀԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ
կառավարման գիտությունների դոկտորանտ

«Magellan» գիտահետազոտական կենտրոն (EA N°3713), Լիոնի տնտեսագիտության և կառավարման գիտությունների դոկտորական դպրոց (ED SEG 486)

ԹԵԶԻ ԹԵՄԱՆ՝
Ընկերությունների և կազմակերպությունների սոցիալ-տնտեսական միջավայրի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման գործընթացի իրականացում (competitive intelligence)՝ կայուն գործունեություն և զարգացում ապահովելու նպատակով

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
Հայաստանի ընդհանուր բարեգործական միություն (ՀԸԲՄ Փարիզ), ֆրանսիական կառավարության կրթաթոշակ





ԵՎԳԵՆԻԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ
իրավաբանական գիտությունների դոկտորանտ

GRAPHOS (IFROSS) գիտահետազոտական կենտրոն, Իրավաբանության դոկտորական դպրոց (ED 492)

ԹԵԶԻ ԹԵՄԱՆ՝
Փոխակ մայրություն. Ֆրանսիայի և Հայաստանի իրավունքների համեմատական վերլուծություն

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
Հայաստանի ֆրանկոֆոն փաստաբանների միություն, ֆրանսիական կառավարության կրթաթոշակ

ԳՐԻ ԳՐԻԼԽԱՍՅԱՆ
կառավարման գիտությունների դոկտորանտ

«Magellan» գիտահետազոտական կենտրոն (EA n°3713), Լիոնի Տնտեսագիտական և կառավարման գիտությունների դոկտորական դպրոց (ED SEG 486)

ԹԵԶԻ ԹԵՄԱՆ՝
Ինտերնետի միջոցով գեներացվող և ձեռնարկություններին հասանելի տվյալների օգտագործումը որպես Մարքեթինգի արդյունավետության բարելավման լծակ

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
Հայաստանի ԿԳՄՆ, ֆրանսիական կառավարության կրթաթոշակ

ՍՈՍԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ
կառավարման գիտությունների դոկտորանտ

«Magellan» գիտահետազոտական կենտրոն (EA n°3713), Լիոնի Տնտեսագիտական և կառավարման գիտությունների դոկտորական դպրոց (ED SEG 486)

ԹԵԶԻ ԹԵՄԱՆ՝
Ապրանքատեսակների «Made in/Արտադրված Է» պիտակավորման հոգեբանական ազդեցությունը սպառողների մտածելակերպի վրա

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
«Muscaris» ձեռնարկություն, ՀՖՀՀ



ԵՐԱՆՈՒՀԻ ՅԱՆԴՅԱՆ
իրավաբանական գիտությունների դոկտորանտ

«Louis Josserand» (CLJ)
գիտահետազոտական կենտրոն, Իրավաբանության դոկտորական դպրոց (ED 492)

ԹԵԶԻ ԹԵՄԱՆ՝
Ֆինանսական ծառայությունների մատուցումն ինտերնետի միջոցով

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
«Տնտեսագիտական կրթություն և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամ, Կենտրոնական բանկ

ԳՐՀԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ
իրավաբանական գիտությունների դոկտորանտ

GRAPHOS (IFROSS) գիտահետազոտական կենտրոն, Իրավաբանության դոկտորական դպրոց (ED 492)

ԹԵԶԻ ԹԵՄԱՆ՝
«Կեղծ դեղերի արտադրության և շրջանառության դեմ պայքարի իրավական մեխանիզմները Հայաստանում և Ֆրանսիայում, Եվրասիական տնտեսական միության և Եվրամիության շրջանակներում»

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
Կեղծ դեղերի դեմ պայքարի գիտահետազոտական ինստիտուտ (IRACM)

ՄԱՐԻԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
իրավաբանական գիտությունների դոկտորանտ

«Louis Josserand» (CLJ)
գիտահետազոտական կենտրոն, Իրավաբանության դոկտորական դպրոց (ED 492)

ԹԵԶԻ ԹԵՄԱՆ՝
Անշարժ գույքի օգտագործման իրական իրավունքներ

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
Ֆրանկոֆոնիայի միջազգային ինստիտուտ





ՏԱԹԵՎԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ
իրավաբանական գիտությունների դոկտորանտ
իրավաբանության դոկտորական դպրոց (ED 492)

ԹԵԶԻ ԹԵՄԱ՝
Միջազգային վարկային պայմանագիր եվ
միջազգային մասնավոր իրավունք. հայկական եվ
ֆրանսիական օրենսդրության համեմատական
վերլուծություն

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
«Տնտեսագիտական կրթություն և
հետազոտությունների աջակցման կենտրոն»
հիմնադրամ, ՀՀ Կենտրոնական բանկ



ՅՈՒՐԻ-ՄԵԼԻՔ ՕՋԱՆԶԱՆՅԱՆ
իրավաբանական գիտությունների դոկտորանտ

«Louis Josserand» (CLJ) գիտահետազոտական
կենտրոն
իրավաբանության դոկտորական դպրոց (ED 492)

ԹԵԶԻ ԹԵՄԱ՝
Էլեկտրոնային առևտրի ոլորտում ՀՀ իրավական
դաշտի բացերն ու առանձնահատկությունները

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
ՀՖՀՀ և գործընկերներ



ԷԼԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
կառավարման գիտությունների դոկտորանտ

«Magellan» գիտահետազոտական կենտրոն
(EA n°3713), Լիոնի Տնտեսագիտության և
կառավարման գիտությունների դոկտորական
դպրոց (ED SEG 486)

ԹԵԶԻ ԹԵՄԱ՝
«Մեծածավալ տվյալների /Big Data/
վերլուծության կիրառումը հաճախորդների հետ
հարաբերությունների կառավարման /CRM/
համակարգում»

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
Web-ISI France, ՀՖՀՀ

ԱՌԴԱ ՏԵՐ-ՆԱԶԱՐՅԱՆ
գրականության, մարդկային և սոցիալական
գիտությունների դոկտորանտ

Լեզուների գիտահետազոտական կենտրոն
լաբորատորիա, Կլերմոն դ'Օվերն համալսարանի
Հումանիտար եւ հասարակական գիտությունների
դոկտորական դպրոց

ԹԵԶԻ ԹԵՄԱ՝
Լեզուների իմացության համաեվրոպական
համակարգի (ԼԻՀՀ) ինտեգրումը Հայաստանի
օտար լեզուների ուսուցման բարձրագույն
կրթական համակարգ. Հայաստանի օրինակը
որպես հետխորհրդային տարածաշրջանի
հանրապետություն

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
Ինքնաֆինանսավորում

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ
իրավաբանական գիտությունների դոկտորանտ

GRAPHOS (IFROSS) գիտահետազոտական կենտրոն,
իրավաբանության դոկտորական դպրոց (ED 492)

ԹԵԶԻ ԹԵՄԱ՝
Արհեստական բանականության
իրավական հիմնախնդիրները

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝
ՀՖՀՀ և գործընկերներ





3

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱԿՈՐՈՒՄ

2015թ.-ից ի վեր ՀՖՀՀ-ում ամեն տարի իրականացվում է շրջանավարտների աշխատանքի տեղավորման ուսումնասիրություն: 2019թ. մարտից մայիս ընկած ժամանակահատվածում «Կարիերայի կենտրոն»-ի կողմից իրականացվել է ՀՖՀՀ-ի շրջանավարտների աշխատանքի տեղավորման ուսումնասիրություն, որում ընդգրկվել են նաև 2018թ. շրջանավարտները: Հարցումն իրականացվել է նրանց դիպում ստանալուց և հայկական աշխատաշուկա մտնելուց 9 ամիս անց: 2018թ. համալսարանը տվել է 222 Բակալավրիատի և Մագիստրատուրայի շրջանավարտ: 99.5% պատասխան գրանցած հարցումն իրականացվել է հետևյալ ձևաչափով.


1. Կարիերայի կենտրոնի կողմից նախապես մշակած առցանց հարցաթերթիկ,
2. Հարցաթերթիկի տարածում Էլ.փոստով,
3. Facebook և LinkedIn սոցիալական ցանցերում անհասանելի ուսանողների հետ կապ հեռախոսով:

Ուսումնասիրությունը տևել է 3 ամիս տվյալները հավաստիացնելու և ամբողջացնելու համար, անհրաժեշտության դեպքում ոչ լիարժեք տվյալների ճշգրտվել են շրջանավարտների հետ հեռախոսազանգերով կապ հաստատելու միջոցով: Հարցմանը բարձր մասնակցությունն ակնհայտ է և վկայում է

ՀՖՀՀ շրջանավարտների նվիրվածությունը համալսարանին: Ուստի, կարող ենք փաստել, որ ներկայացված արդյունքները արտացոլում են մեր շրջանավարտների իրական կարգավիճակը դիպում ստանալուց հետո: Բոլոր ուսումնասիրությունները հասանելի են ՀՖՀՀ-ի կայքում: 2018թ. շրջանավարտների մասնագիտական ներգրավվածության վերաբերյալ 2019թ. իրականացված ուսումնասիրություններին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով.

https://ufar.am/page_files/documents/insertion-2019/insertion-professionnelle-des-alumni-2018-fr.pdf

«Կարիերայի կենտրոնի» կողմից հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով մշակված թռուցիկները ներկայացնում են շրջանավարտների մասնագիտական կարգավիճակը, ինչպես նաև նրանց գոհունակությունը ՀՖՀՀ-ում ստացած կրթությունից և այլն:




2018թ. շրջանավարտների մասնագիտական ներգրավվածության մասին 2019թ.-ին կատարված հարցումը գրանցել է 99,5% պատասխան:

2018թ. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝

իրականացված 2019թ. մարտից հունիս ընկած ժամանակահատվածում՝ դիպլոմ ստանալուց 6 ամիս անց

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ



ՀՖՀՀ-ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԶՈՒՏ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ.

մագիստրատուրայում՝ 273000 AMD
բակալավրիատում՝ 207000 AMD

ՀՀ գործող ամսական միջին զուտ աշխատավարձը՝ 179600 ՀՀ դրամ:
Աղբյուր՝ ՀՀ վիճակագրության կոմիտե


ՀՀՀՀ-ի շրջանավարտների ամսական միջին զուտ աշխատավարձը 69% -ով գերազանցում է ՀՀ գործող ամսական միջին զուտ աշխատավարձը*:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

10 շրջանավարտից 8-ը ունեն աշխատանք, 30%-ը շարունակում է ուսումը, որից 19% ուսման հետ համատեղում է աշխատանքը: 8%-ը մեկնել է արտերկիր, որից 6%-ը՝ ուսումը շարունակելու:

Շրջանավարտների ընդամենը 4% -ն է աշխատանք փնտրում

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՏՆԵԼՈՒ



1/2 2 շրջանավարտից 1-ը գտել է աշխատանքը ուսման տարիներին:



Շրջանավարտների ավելի քան 90%-ը գոհ է իր ստացած ուսումից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՂ ԹՈՓ 5 ՈԼՈՐՏ

- 1 առևտուր և սպասարկում
- 2 Նոր տեխնոլոգիաներ
- 3 բանկային գործ և ապահովագրություն
- 4 հաշվապահություն և խորհրդատվություն
- 5 արտադրություն

5 շրջանավարտից 1-ը գտել է աշխատանք ՀՖՀՀ-ի

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ միջոցով

4


ԲՅՈՒՋԵ

2018թ. ՀՀՀՀ-ի բյուջեն կազմել է 860 մլն դրամ (1.7 մլն եվրո), որին պետք է ավելացնել ռեկտորի, գլխավոր քարտուղարի աշխատավարձերը, ինչպես նաև ֆրանսիայի իշխանության տեղական մարմինների աջակցությունը, որտեղ ուսանողներն անց են կացնում իրենց յոթնամյա պրակտիկան:

Նոր կամպուսի կառուցումն իրագործելու համար ՀՀՀՀ-ի ռազմավարության մի մասը դրամահավաքն է: Հիմնվելով հիմնականում վարկի վրա՝ 3 տարի ի վեր համալսարանի ֆինանսական կարողությունը մեր վերահսկողության կենտրոնում է՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումներով պայմանավորված ուսանողների հոսքի

նվազման բարդ համատեքստում: 2017-2018 ուսումնական տարին անկասկած դիմելիության առումով ամենաբարդն էր ինչպես ՀՀՀՀ-ի, այնպես էլ Հայաստանի բոլոր համալսարանների համար: Որպես օրինակ՝ 2019թ. սեպտեմբերին, ի տարբերություն նախորդ տարվա 153-ի, ունեցել ենք 374 նոր ընունված ուսանողներ, որոնք Բակալրիատի 4 տարիների ընթացքում զգալի ազդեցություն կունենան համալսարանի ֆինանսական եկամուտների վրա: Ծախսերի և եկամուտների խիստ և կանխարգելիչ կառավարման շնորհիվ «Գրանթ Թորթոն»-ի իրականացրած աուդիտի արդյունքում ակնհայտ դարձավ 3 տարի անընդմեջ գրանցած տնտեսումը և կանխատեսման ու իրականացման միջև եղած աննշան տարբերությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵ




երեք տարի շարունակ մենք աշխատում ենք ֆինանսական հաշիվների համախմբման և մեր աշխատանքային կապիտալի ամրապնդման համար եզրեր ստեղծելու ուղղությամբ, ինչը մնում է թույլ: Չնայած Հայաստանի բոլոր բուհերում դիմորդների գրեթե զրոյական հոսքին, 2018թ. հաշիվների աուդիտը դրական արդյունք ցույց տվեց, այն է հարկերի համախմբումից հետո 16 մլն դրամ կամ 2% գործառնական գործունեություն:

Աշխատավարձի քաղաքականությունն ապահովեց վարչական աշխատակազմի

աշխատավարձերի 4% աճ, վարձատրության կարգի վերազնադատում և ստաժի բոնուսային սխեմայի ստեղծում: Վերջին 4 տարիների ընթացքում ուսման վարձի բարձրացումը սահմանափակվել է 3%-ով:


«Գրանթ Թորթոն»-ի կողմից իրականացված աուդիտի արդյունքներն ու հաշվետվությունները հասանելի են համալսարանի կայքում հետևյալ հղումով՝ <https://ufar.am/fr/universit/comptes-rendus-financiers.html>

ՀՀՀՀ ԲՅՈՒՋԵ (AMD)



Չնայած Հայաստանի բոլոր բուհերում դիմորդների գրեթե զրոյական հոսքին, 2018թ. հաշիվների աուդիտը դրական արդյունք ցույց տվեց, այն է հարկերի համախմբումից հետո 16 մլն դրամ կամ 2% գործառնական գործունեություն:

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ



5

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ

ՀՀՀՀ-ում կրթաթոշակային համակարգը ՀՀ կանոնադրության մաս է կազմում, որը սահմանում է, որ բուհերում վարձավճարներից գոյացած ընդհանուր հասույթի առնվազն 7% պետք է վերաբաշխվի ուսանողների առնվազն 10%-ի վրա:
2004թ. ՀՀ օրենք, հոդված 6.4.1.

«Բարձրագույն ուսումնական հաստատությունը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր

միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում»:

Այդ դիրքորոշումը հաշվի է առնվել ՀՀՀՀ-ի Հոգաբարձուների խորհրդի կողմից, որը պահանջում է, որպեսզի ուսման վարձից գոյացած ընդհանուր հասույթի 9,5 կամ 10%-ը ուսանողներին փոխհատուցվի ակադեմիական առաջադիմության կրթաթոշակի և սոցիալական օգնության նպաստի միջոցով (2017թ. հուլիսի 7-ի և 2018թ. հուլիսի 12-ի ՀԽ քվեարկություն):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ

Սոցիալական օգնության նպաստ տրամադրվում է ամենամյա հանձնաժողովի որոշմամբ, որը կազմակերպվում է սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին և, որի կազմի մեջ մտնում են Հայաստանում ֆրանսիայի դեսպանության մշակույթի և համագործակցության բաժնի պատասխանատուն, ՀՀՀՀ-ի գլխավոր քարտուղարը և ռեկտորը: Նախքան հանձնաժողովը ուսանողները ներկայացնում են իրենց դիմումները,

որոնք մշակվում են ՀՀՀՀ-ի ուսումնական մասի կողմից համաձայն մի շարք չափանիշների, որոնք տրամադրում են որոշակի միավորներ: Հանձնաժողովը հիմք է ընդունում այս չափանիշները, շնորհած միավորները (աշխատանքը կատարվում է տեղում) և համապատասխանելիության նվազագույն շեմը:

Ուսումնական տարվա ընթացքում լինում են մի շարք այլ դեպքեր, որոնք ընթացքում քննության են առնվում Ռեկտորի կողմից. դրանք հիմնականում վերաբերում են այն արական սեռի ուսանողներին, որոնք նոր են վերադարձել գիմվորական ծառայությունից կամ այն ընտանիքներին, որնց սոցիալական վիճակը կտրուկ վատացել է տարվա ընթացքում:

2018թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ

Ի տարբերություն նախորդ տարվա 147 դիմումի, հանձնաժողովը այս տարի քննել է 125 դիմում: Հիս որոշմամբ համալսարանի բյուջեից 35 000€ տրամադրվել է սոցիալական օգնությանը՝ լրացուցիչ 5000€-ի

հնարավորությամբ: Մնացածը ուսումնական տարվա ընթացքում բաշխվում է ըստ այն դեպքերի, որոնք ներկայացվում են Ռեկտորին: Այսպիսով, հանձնաժողովը խորհրդակցությունների արդյունքում որոշում կայացրեց օգնել դիմողների 66%-ին կամ 82 ուսանողի՝ միջինը 427 եվրո գումարով: Որպես հիշեցում, նախորդ տարի մենք օգնեցինք 77 ընտանիքի՝ միջինը 429 եվրոի

Կատեգորիա	ուսանողների թիվ	գումար
իրավ.	22	9609 €
մարքեթինգ	11	4178 €
ֆինանսներ	8	3533 €
կառավ.	36	15447 €
մագիստր.	5	2232 €
ընդհանուր	82	35000 €

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

Ակադեմիական առաջադիմության կրթաթոշակները որոշվում են ավտոմատ մեխանիզմի շնորհիվ, որն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտին և յուրաքանչյուր կիսամյակի համար հատկացվում է տվյալ կիսամյակի համար ամբողջական կամ մասնակի փոխհատուցում ըստ ուսանողի ունեցած միջին գնահատականի, վարկանիշի և յուրաքանչյուր ֆակուլտետում գրանցված

ուսանողների քանակի: Այս տարի ակադեմիական կրթաթոշակից օգտվել է 160 ուսանող, որից 147-ը Բակալավրիատի, 13-ը՝ Մագիստրատուրայի: Բաշխումն ըստ գեղչային համակարգի հետևյալն է.
-24 կրթաթոշակ՝ վարձավճարի 100%-ի չափով
-60 կրթաթոշակ՝ վարձավճարի 50%-ի չափով
-76 կրթաթոշակ՝ վարձավճարի 25%-ի չափով
տարվա կտրվածքով ընդհանուր 90 000 եվրո:

125 000 € = 68 900 000 AMD՝ հատկացված կրթաթոշակների ընդհանուր գումարը	427 € = 240 000 AMD՝ սոցիալական աջակցության ընդհանուր գումարը	402՝ կրթաթոշակ ստացողների ընդհանուր թիվը
---	---	--

6

ՍԵՆԳՈՐԻ ԱՄԲԻՈՆ

Սենգորի անվան Ֆրանկոֆոնիայի ամբիոնների միջազգային ցանցը, որը ստեղծվել է 2003 թվականին, նպատակ ունի համախմբելու ֆրանսալեզու տարածքները և ոչ միայն՝ ուսանողներին ինստիտուցիոնալ ֆրանկոֆոնիայի տարածքում ուսուցանելու, ինչպես նաև ֆրանկոֆոնիայի զարգացմանը անկախ աշխատանքներով նպաստելու համար: Այսօր արդեն ցանցն ունի 18 ամբիոն 4 մայրցամաքներում:

Սենգորի անվան Ֆրանկոֆոնիայի ամբիոնների միջազգային ցանցի և Ֆրանկոֆոնիայի միջազգային ինստիտուտի (2IF) միջև կապը շատ ամուր է, և մենք միասին աշխատում ենք ի նպաստ ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության և (AUF) Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության աշխատանքների արդյունավետության, որոնք մեզ պաշտոնապես նոր են ճանաչել:

Հայաստանի Սենգորի անվան Ֆրանկոֆոնիայի ամբիոնը գործում

է 2011թ. մարտից Հայաստանում ֆրանսիական համալսարանում (ՀՖՀՀ): 2015թ. դեկտեմբերին այն մասնագիտացել է իրավաբանության ոլորտում՝ ընձեռնելով ազգային և տարածաշրջանային ավելի մեծ ճանաչում: Համակցելով իր գործողությունները համալսարանի գործողությունների հետ՝ ամբիոնը մշակում է իր սեփական գործողությունների ռազմավարությունը ցանցի ներսում:

Հայաստանում Սենգորի ամբիոնի առաքելություններից է նպաստել ֆրանկոֆոնիայի, ֆրանկոֆոնիայի վերաբերյալ ուսումնասիրությունների և ֆրանկոֆոն համալսարանների միջև համագործակցության խթանմանը: Այս առումով նա իրականացնում է համաժողովների շարք՝ հաճախ միջազգային՝ խաչաձև և իրավաբանական թեմաներով՝ ամբիոնին տալով իրավաբանական ուղղվածություն և հավատարիմ մնալով Սենգորի անվան Ֆրանկոֆոնիայի ամբիոնի միջազգային ցանցի կանոնադրությանը:

ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հայաստանի Սենգորի ամբիոնը բաղկացած է 3 անդամից.

- Նախագահող ՀՖՀՀ ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր Ժան-Մարկ Լավեստր,
- Համակարգող ՀՖՀՀ իրավաբանական ֆակուլտետի դեկան Կարին Յովսեփեանը,
- Կոմունիկացիայի բաժնի օգնական Օլյա Հարությունյանը:

Ամբիոնը կցված է ընդհանուր ղեկավարությանը, օգտվում է նաև Գլխավոր քարտուղարի աջակցությունից գործողությունների ռազմավարության և ընթացիկ փաստաթղթերի առնչությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ

ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ՀՖՀՀ-ի ֆրանսերենի ամբիոնը բաղկացած է 22 անդամից, որոնց մի մասը մասնագիտացած է ֆրանկոֆոն աշխարհում: Յուրաքանչյուր ուսումնական տարի համալսարանում դասավանդվում է ավելի քան 9000 ժամ ֆրանսերեն: Բացի այդ, առկա է ֆրանսերեն լեզվով մասնագիտացված առարկաների դասավանդում ավելի քան 1000 ժամ (իրավունք, կառավարում, մարքեթինգ): Ֆրանսիական համալսարանի գործունեությունը առանձնահատուկ է

նրանով, որ ֆրանսերենի իմացությունը անհրաժեշտ պայման չէ բոլի ընդունվելու համար՝ նպատակ ունենալով ուսանողներին բերել դեպի ֆրանկոֆոնիա: Համալսարանի ստեղծումից ի վեր ուսանողները պետք է արտոնագիր ստանան երկրորդ և երրորդ կուրսերի ընթացքում (L1 et L2), որպեսզի իրավունք ունենան ՀՖՀՀ-ում շարունակել Բակալավրիատի ուսումը: 2015թ. ի վեր DELF B1 տիպի քննությանը 50/100 միավորը բավարար չէ ուսումնական տարին ավարտելու համար (ՀՖՀՀ ներսում), այլ 60/100 միավորը: 2016թ. սեպտեմբերից 4-րդ կուրսի (licence 3) ավարտին դիպվում վավեր ճանաչելու համար DELF B2 որակավորումը պարտադիր է դարձել:

ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

ՀՖՀՀ-ի ընդունելության քննություն հանձնող թեկնածուների ավելի քան 80%-ը որպես քննական առարկա օտար լեզվի նախապատվությունը տալիս է անգլերենին: Սակայն, դպրոցներում ֆրանսերենի դերը կարևորելու համար ՀՖՀՀ-ն որոշեց ընդունելության քննության ժամանակ B1 մակարդակ ունեցողների համար լեզվի գնահատականի շեմը ընդունել և տալ առավելագույն գնահատական (սկզբագույնը՝ 60/100): Առաջին կիրառությունը եղավ 2016թ. հունիսի ընդունելության ժամանակ: Համալսարանը առանց մրցույթի ընդունում է ֆրանսիական միջնակարգ

լրիվ կրթություն ունեցողներին:

2018թ.-ին համալսարանի և Անատոլ ֆրանս ֆրանսիական դպրոցի համագործակցության արդյունքում վերջինս սկսեց Blaise Pascal եռամյա ցիկլը (10, 11, 12-րդ դասարանների հանրակրթական ուսուցում): Սկզբնապես մշակված ոչ ֆրանկոֆոն հայերի համար, այն առաջարկում է մաթեմատիկայի և SS ոլորտի խորացված ծրագիր: Այդպիսով, ֆրանսերենի ինտենսիվ դասավանդումը հետապնդում է կրկնակի նպատակ՝ ավելացնելով



ֆրանկոֆոն երիտասարդների և 2018թ. սեպտեմբերին բացված Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ապագա դիմորդների քանակը:

-Ֆրանսերենի դասընթացներ ՀՖՀՀ-ի դասախոսական և վարչական աշխատակազմի համար 2016թ. ի վեր կազմակերպվում են անվճար դասընթացներ հայ դասախոսների և աշխատակազմի որոշ ոչ ֆրանկոֆոն անդամների համար՝ նպաստելով անձնակազմի պարբերաբար վերապատրաստմանը և ֆրանկոֆոնիայի տարածմանը: 2018-2019 ակադեմիական տարվա ընթացքում 5 աշխատակից մասնակցեցին այդ դասընթացներին՝ բաժանվելով երկու խմբի՝ սկսնակ և միջին մակարդակի: 2019թ. սեպտեմբերին այս դասընթացին մասնակցել ցանկացողների թիվը ինն էր, այսպիսով հոկտեմբեր ամսից նախատեսվում է ունենալ սկսնակների խումբ (A1/A2):

-Դասընթաց ֆրանկոֆոնիայի և ֆրանկոֆոնիայի անվճար և զանգվածային հեռավար դասընթացների (CLOM) վերաբերյալ Սենգորի ամբիոնը, համագործակցելով ֆրանսերենի ամբիոնի



հետ, խրախուսում է ուսանողներին գրանցվել ֆրանկոֆոնիայի վերաբերյալ առցանց բաց դասընթաց-ներին՝ թույլատրելով ձեռք բերված գիտելիքների վավերացումը համալսարանական գիտական և մանկավարժական խորհրդի կողմից վավերացված բոնուսային համակարգով գնահատման ընթացքում առնվազն 60/100 կամ 80/100 ստացած ուսանողների համար:

2016թ. մոտ 130 ուսանող (Licence 2) ավարտեցին առցանց բաց դասընթացը՝ այդպիսով Հայաստանը դասելով որպես ամենաակտիվ երկիր՝ ըստ մասնակցության ցուցանիշի: Դասընթացը կրկնվեց նաև 2017-2018թթ.՝ ավելի քան 200 մասնակիցներով, սակայն ոչ 2018-2019թթ.- ին՝ նոր բովանդակությամբ առցանց բաց դասընթացի բացակայության պատճառով: ՀՖՀՀ-ն դասընթացի վերաբերյալ առաջարկություններ է ներկայացրել ֆրանկոֆոնիայի միջազգային ինստիտուտին (2IF) և լիափոխ է, որ մոտ ապագայում կկարողանանք թարմացնել գործունեությունը:

ՀԱՆՐԱՀՈՋԱԿՈՒՄ

2018-2019-ԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հայաստանում Սենգորի ամբիոնի առաքելություններից է նպաստել ֆրանկոֆոնիայի, ֆրանկոֆոնիայի վերաբերյալ ուսումնասիրությունների և ֆրանկոֆոն համալսարանների միջև

-Կանանց վերնախավը ֆրանսախոս աշխարհում. Միջազգային գիտաժողով, որին մասնակցում են շուրջ քսան հետազոտողներ և հանրային դեմքեր ամբողջ աշխարհից: Երևան, 11-12-ը սեպտեմբերի 2018թ. (Ավետիսյան դպրոցում)

-Եվրամիության համընդհանուր առևտրային քաղաքականությունը: Երևան, 26-ը հոկտեմբերի 2018թ. (ՀՖՀՀ-ում). Խոսնակ՝ Էֆթիմիա Լեկու:

-Վարչական արդարադատություն և ընտրական վեճեր – Հանդիպում գերագույն խորհրդի անդամների հետ: Երևան, 1-ը մարտի 2019թ. (ՀՖՀՀ-ում): Խոսնակ՝ Իվ Դուտրիո Գուլեն:

-Նախնական կալանքը և դրա այլընտրանքները – Ֆրանսիա-Հայաստան համեմատական հայացք: Երևան, 6-ը մարտի 2018թ. (ՀՖՀՀ-ում).

համագործակցության խթանմանը: Այս նպատակով՝ նա իրականացնում է մի շարք համաժողովներ՝ հաճախ միջազգային, խաչաձև և իրավաբանական թեմաներով՝ ամբիոնին տալով իրավաբանական ուղղվածություն և հավատարիմ մնալով Սենգորի անվան ֆրանկոֆոնիայի ամբիոնի միջազգային ցանցի կանոնադրությանը.



-Մրցույթ «Ֆրանկոֆոնիան այստեղ և այլուր»: Մրցույթ երեք փուլով՝ գրավոր աշխատանք, ֆրանկոֆոնիային և ֆրանսիական մշակույթին վերաբերող հարցեր, ճարտասանություն՝ համագործակցելով Կանադայի դեսպանության հետ: Երևան, 19-ը մարտի 2019թ. (ՀՖՀՀ-ում):

-«Տվյալների գիտություն՝ հասարակական գիտություն» Գիտաժողովների ցիկի Նախագիծը՝ կապված ՀՀ ԱԱԽ բարձրորակ հաշվարկային ազգային կենտրոնի ստեղծման մարտահրավերների հետ: Երևան, 10-12-ը ապրիլի, 2019թ. (ՀՖՀՀ-ում և ԹԻՒՄԴԻ կենտրոնում):



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԵՏ ՖՐԱՆԿՈՖՈՆ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԵԼԻՍ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և, մասնավորապես, արարողակարգային ծառայությունը, մշտական կապի մեջ է համալսարանի ուսանողների հետ և դիմում է նրանց, երբ ֆրանկոֆոն պատվիրակությունները գալիս են, կամ երբ իրականացնում են գիտաժողովներ: Ինչպես օրինակ 2018թ. հոկտեմբերին Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի XVII-րդ Գագաթնաժողովին:

Ավելի քան 400 ուսանող կամավորության սկզբունքով մասնակցեցին Գագաթնաժողովի նյութատեխնիկական ապահովմանը՝ ներառյալ ավելի քան 80 երկրների պատվիրակությունների ընդունելությունը և ուղեկցումը: Շնորհիվ իր ուսանողական կամավորների և ֆրանկոֆոնիայի ավանի ֆրանսիայի

տաղավարում ներկա գտնվելուն, ՀՖՀՀ-ն և Հայստանի Սենգորի ամբիոնը մեծ ճանաչում ունեցան:

Գագաթնաժողովի շրջանակներում ֆրանկոֆոնիայի ավանի ֆրանսիայի տաղավարում, որտեղ հավասարապես ներկայացված էին ՀՖՀՀ-ը և Սենգորի ամբիոնը, բակալավրիատի ուսանողները այցելուների համար կազմակերպել էին ինտերակտիվ և զվարճալի միջոցառումներ իրավական թեմաների շուրջ, իսկ դոկտորանտները՝ գաղափարների քննարկումներ (բանավեճեր) հանրային հետաքրքրություն ներկայացնող իրավական և գի տական թեմաների վերաբերյալ:





ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐ



7

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Ուսումնական գործընթացի կարևոր մասն է կազմում մասնագիտական պրակտիկան: «Կարիերայի կենտրոնը» նպատակ էր հետապնդում պահպանել արտերկրում պրակտիկանտների թիվը՝ Նվազագույն ֆինանսավորմամբ (50x1400 եվրո) և բարձրացնել պրակտիկանտների ընտրության և վերակազմի որակը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

ՊՐԱԿՏԻԿԱ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պրակտիկան շահավետ համագործակցության հնարավորություն է ձեռնարկության, ուսանողի և համալսարանի համար

. Ձեռնարկության համար պրակտիկանտի ընդունումը որևէ նախագիծ զարգացնելու, ուսումնասիրություն կատարելու կամ որևէ ծառայության որակը բարելավելու հնարավորություն է,

. ուսանողների համար պրակտիկան հնարավորություն է ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, ընտրած մասնագիտության մարտահրավերները հասկանալու, աշխատաշուկայի զարգացումներին հարմարվելու համար, ինչպես նաև մասնագիտական աշխարհում սեփական աշխատանքային առաջին նախագծերը հստակեցնելու համար:

. համալսարանի համար պրակտիկան ձեռնարկության աշխարհի հետ սերտ համագործակցություն զարգացնելու և կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին հարմարեցնելու հնարավորություն է:

Արդեն 15 տարի, հոկտեմբեր և նոյեմբեր

ամիսներին համալսարանում անցկացվում է ավանդույթ դարձած «Աշխատանքի տոնավաճառը», որը մեր ուսանողներին և մեր մասնագիտական գործընկերներին, որոնք ամենաակտիվն են Հայաստանում հնարավորություն է ընձեռում հաստատել իրենց առաջին կապը: Այս տոնավաճառը դարձել է ձեռնարկությունների և իրենց ապագա պրակտիկանտների՝ ՀՀՀՀ բակալավրիատի և Մագիստրատուրայի ուսանողների հանդիպման վայր, ինչպես նաև շրջանավարտների համար աշխատանքի ընդունվելու միջոց:

2019թ. աշխատանքի տոնավաճառի տվյալներն են.

.Մասնակից ձեռնարկությունների թիվը՝ 53

.Մասնակցող ուսանողների թիվը՝ 250-ից ավելի

.Ձեռնարկություններին ուղղված ուղեգրերի քանակը՝ 168

2019թ. հունվարին ստորագրվել է ավելի քան 338 համաձայնագիր: «Կարիերայի կենտրոնի» ծավալած աշխատանքները թույլ տվեցին ոչ միայն մեծացնել մասնակից ուսանողների քանակը, այլև ներգրավել հայաստանյան նոր դինամիկ կազմակերպություններ:

ՊՐԱԿՏԻԿԱ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Ֆրանսիայում և արտերկրում
անցկացվող պրակտիկան եվրոպական
ձեռնարկությունների գործունեությանը
ծանոթանալու յուրահատուկ

հնարավորություն է: Այն նաև անձնական
և մշակութային հարաբերությունների ու
Սփյուռքի հետ կապերի զարգացման
միջոց է:
Ամեն տարի ավելի քան 60 ուսանող
իրենց մասնագիտական պրակտիկան
անցկացնում են արտերկրում
մասնավորապես Ֆրանսիայում:

2019 թ. 61 ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱՇԽԱԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ
ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



ՀՀՀՀ-ի բազմաթիվ գործընկերներ աջակցում
են Ֆրանսիայում և արտերկրում պրակտիկայի
ֆինանսավորմանը: Բացի այդ, Սփյուռքի
ասոցիացիաները, ինչպես նաև ֆրանսիայի
հանրային ձեռնարկությունները, որոնք

աջակցում են ՀՀՀՀ նախագծին և խաղում
են գերակա դեր երիտասարդ հայերին
հյուրընկալելու հարցում:

ՐԱԿՏԻԿԱՅԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ (այբբենական կարգով)

- Թուլուզի և Միդի-Պիրենեյի հայկական
ասոցիացիա
- AUF Ֆրանկոֆոնիայի համալսարանական
գործակալություն
- Օվերն-Ղոն-Ալպերի մարզային խորհուրդ
- BULLUKIAN հիմնադրամ
- Հայ-ֆրանսիական
առևտրաարդյունաբերության պալատ

- Քաղաք Լիոն
- Քաղաք Մարսել
- «Միասին» հիմնադրամ
- Քաղաք Նիցց
- Քաղաք Փարիզ
- Կոտ դ'Ազյուրի SOS - Հայաստան
- Քաղաք Թուլուզ
- ՀԲԸՄ Ֆրանսիա/Լիոն
- Քաղաք Վալենսիա



SOS-ARMENIE Côte d'Azur



2019թ.-ին շնորհիվ մեր գործընկերների աջակցության, գործնականում ստացել ենք արտերկր
պրակտիկայի առաջարկներ բոլոր ուղղությունների համար: Դա հնարավորություն տվեց
արտերկրում պրակտիկայի հարցազրույցները կազմակերպել լավագույն պայմաններում
կիրառելով մասնագիտական մոտեցումներ:

8

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Միջազգային և եվրոպական ծրագրերի ոլորտում սահմանված նպատակներն են շարունակել ընթացիկ ծրագրերը (Erasmus+, AUF) և նախաձեռնել տարածաշրջանային և միջազգային նոր համագործակցություններ: 2018-2019թթ. ՀՀՀՀ-ն հետամուտ եղավ իր միջազգայնացման ռազմավարությանը՝ խթանելով

տեղական և միջազգային բուհերի հետ կառուցողական և արդյունավետ համագործակցությունը՝ նպատակ ունենալով ստեղծել կարևորագույն նախագծեր և ՀՀՀՀ-ի առաջնահերթությունները սպասարկող ցանց՝ տեղական և միջազգային մակարդակում:

Էրազմուս+ ծրագրեր (Կարողությունների զարգացում/ Միջազգային կրեդիտային շարժունություն)

Էրազմուս+ C3QA նախագծի շրջանակում ղեկավարությունը շարունակեց համակարգել և ղեկավարել ծրագիրը իր իրականացման վերջին տարվա ընթացքում՝ ուղղակիորեն թիրախավորելով բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները՝ բերելով նոր գաղափարներ, նոր գործիքներ և մեխանիզմներ դոկտորական ծրագրերի արդյունավետ մատուցման և դրանց ներքին և արտաքին որակի ապահովման, ինչպես նաև փորձնական և պաշտոնական



հավատարմագրերի իրականացման գործընկեր երկրներում: Ներքին որակի ապահովման և մշակված չափորոշիչների և ուղեցույցների ինը ձեռնարկ պաշտոնապես ընդունվել են Մոնդոլիայում և Հայաստանում:

C3QA ծրագրի շրջանակում նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են սահմանված ժամկետում, ներառյալ ֆինանսական և վերջնական հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը: Ստացված արդյունքները հասանելի են ծրագրի հետևյալ հասցեով՝ <https://c3-qa.com/project-documents/>

Տնօրինությունը նաև աշխատել է Էրազմուս+ (Կարողությունների զարգացում) ծրագրերի մշակման և ներկայացման վրա՝ ի պատասխան Եվրոպայի Կրթության, աուդիովիզուալ և մշակույթի գործադիր գործակալության կողմից (EACEA) դիմում հայտերի ընդունման առաջարկության:

-WBL4EaP ծրագիրն ուղղված է ձեռնարկությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև գործընկերության ամրապնդմանը և շրջանավարտների աշխատունակության բարձրացմանը՝ բարձրագույն կրթության ոլորտում ուսուցման ճկուն մոդելի օժանդակ քաղաքականության մշակման և իրականացման միջոցով, որի վերջնական նպատակն է Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում խթանել ուսումը աշխատավայրում:

-ARMDOCT ծրագիրը նպատակ ունի բարեփոխելու դոկտորական կրթությունը Հայաստանում՝ լավագույն եվրոպական փորձին համահունչ՝ զարգացնելու համար գիտելիքի վրա հիմնված հասարակություն և բարձրագույն կրթության ոլորտում հետազոտությունների միջազգայնացում: Վերջապես, Եվրոպայի Կրթության, աուդիովիզուալ և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) ընտրության արդյունքների համաձայն, WBL4EaP

նախագիծը տեղադրվեց պահուստային ցուցակում, մինչդեռ ARMDOCT նախագիծը ստացավ ԵՄ ֆինանսավորում՝ իր գործունեությունն իրականացնելու համար 2020-2023 թվականներին:

Ի պատասխան Եվրոպայի Կրթության, աուդիովիզուալ և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) կողմից դիմում հայտերի ընդունման առաջարկության



Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union



Էրազմուս + ծրագրի առանցքային ՀԳ1 գործողության շրջանակում մշակվել են ուսանողական և անձնական շարժունության ծրագրեր՝ Լիեժի բարձրագույն դպրոցի (Haute Ecole de la Province de Liège (HEPL)), Կվիդզինի Պյոլիսյանսկի քոլեջի և Թուլուզ 3 համալսարանի հետ համագործակցությամբ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐՇՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀՀՀ-ն խրախուսում և աջակցում է իր ուսանողների և աշխատակազմի համար միջազգային շարժունության գործողությունները: Շնորհիվ Գլխավոր քարտուղարի աշխատանքի՝ մենք գործի դրեցինք ելքային և մուտքային շարժունության ուսանողների և

անձնակազմի թեկնածուների ընտրության համար անհրաժեշտ մեխանիզմներն ու գործիքները: Էրազմուս+ ծրագրի ՀԳ1 շրջանակում 2018-2019 ուսումնական տարվա համար շարժունությանը մասնակցել է Մագիստրատուրայի 14 ուսանող (5 ուսանող Ալկալա Համալսարանից, 9 ուսանող՝ Ժան Մուլեն Լիոն 3-ից):

2019-2020 ակադեմիական տարվա ընթացքում մագիստրատուրայի 1-ին կուրսի մյուս 4 ուսանողները մեկ կիսամյակով մեկնեցին Ալկալա համալսարան՝ օգտվելով միջազգային կրեդիտային շարժունության հնարավորությունից:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

2019թ.-ին ՀՀՀՀ-ի բազմաթիվ աշխատակիցներ մասնակցել են աշխատակազմի շարժունության և վերապատրաստումների՝ իրենց որակավորումը բարձրացնելու և, մասնավորապես փարձի փոխանակման համար՝

- 3 մասնակից (Անահիտ Ղազարյան, Արմինե Բոստանջյան, Սիրանուշ Սեյրանյան) ծրագրի և գործընկերությունների միջև աշխատակազմի շարժունության շրջանակում մասնակցեցին Էրազմուս+ աշխատակազմի շաբաթ ծրագրին (Ալկալա, Իսպանիա),
- 1 մասնակից (Բարբարա Գանդրիո) «Համալսարանի կառավարումը թվային դարաշրջանում» թեմայով գիտաժողովում (Սոֆիա, Բուլղարիա),

- 4 մասնակից (Արևիկ Դավթյան, Անահիտ Գասպարյան, Վարդուհի Վարդիկյան, Արայիկ Նավոյան)՝ միջազգային կրեդիտային շարժունության մասին վերապատրաստմանը (Լիոն, Ֆրանսիա),
- 1 մասնակից (Մելքոն Մոմջյան)՝ Նյարդաբանության և ուղեղի խանգարումների համաշխարհային կոնգրեսին (Փարիզ, Ֆրանսիա)
- 1 մասնակից (Արայիկ Նավոյան)՝ Էրազմուս+ գիտաժողովին (Մոլդովա)
- 1 մասնակից (Արփինե Մանասյան)՝ Համալսարանի ֆրանսերենի դասախոսների ֆրանկոֆոն կազմակերպության կողմից կազմակերպված «Ֆրանկոֆոն համալսարաններ» թեմայով վերապատրաստմանը,
- 1 մասնակից (Անահիտ Ղազարյան)՝ միջազգային վարկային շարժունակության դասընթացներ վարելու վերապատրաստմանը (Ալկալա, Իսպանիա):



ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (AUF)

ՀՀՀՀ տնօրինությունը հետևեց ֆրանկոֆոնիայի Համալսարանական Գործակալության AUF-ի հետ երեք ընթացիկ ծրագրերին.

- Աջակցություն «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» նոր բակալավրիատի ստեղծմանը,
- Աջակցություն «Բանկային գործ և ապահովագրություն» մասնագիտական բակալավրիատի ամրապնդմանը,
- ՀՀՀՀ-ի դոկտորանտների շարժունակության ֆինանսավորում:

Այս ծրագրերի շրջանակում նախատեսված բոլոր գործունեություններն իրականացվել

են հաջողությամբ և հաշվետվություններն ուղարկվել են ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալություն:



9 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության իր քաղաքականության շրջանակում, ՀՀՀՀ-ն գործի է դրել մասնագիտական կողմնորոշման դասեր Հայաստանի դպրոցներում՝ նպատակ ունենալով աջակցել մասնագիտական ուղու կառուցմանը և որակյալ կրթության ընտրությանը՝ օգնելու համար բոլոր նրանց, ովքեր մտադիր են ինտեգրվել համալսարան: Հայաստանում ֆրանսիական համալսարանը կազմակերպել է հանդիպումներ հայկական դպրոցների և քոլեջների աշակերտների հետ: Այս հանդիպումների հիմնական նպատակն է ամրապնդել աշակերտների դերը իրենց ապագա մասնագիտության ընտրության հարցում՝ տալով նրանց հայաստանյան բուհերում, մասնաորապես Հայաստանում ֆրանսիական համալսարանում առկա մատչելի տեղեկատվություն և գործիքներ: Հատուկ նպատակները շատ են.

- Խորապես մտածել ապագա համալսարանական կրթության մասին,
- Տեղեկատվություն համալսարանական ընդունելության քննություններին նախապատրաստվելու վերաբերյալ,

- Օգտակար տեղեկատվություն ՀՀՀՀ ընդունելության քննությունները հաղթահարելու համար
- Տեղեկատվություն ուսանողական կյանքի վերաբերյալ՝ կոնկրետ օրինակներով
- Իրազեկում յուրաքանչյուր աշակերտի ակտիվ դերի մասին սեփական մասնագիտական և անձնական ապագայի կառուցման գործում
- Քննադատական մտածելակերպի զարգացում
- Դպրոցներում երիտասարդական նախաձեռնության մշակում
- Դպրոցների տնօրենների հետ համագործակցության նախագծերի ստեղծում

Հանդիպումն իրականացվում է տեղեկատվական դասընթացի, բանավեճերի ու աշակերտների հետ հարց ու պատասխանի ձևաչափով՝ տեղեկացնելու, ուղղորդելու, արժևորելու և ուսանողներին ներգրավելու համար, որպեսզի մտածեն իրենց համալսարանական կրթության ծրագի մասին:

Դա լավ առիթ է նաև հանդիպելու հայաստանյան դպրոցների տնօրենների, ինչպես նաև ավարտական դասարանների աշակերտների հետ՝ բացահայտելու համար համալսարանական ուսումնառության լայն հնարավորությունները, մասնավորապես՝ ուսուցման կազմակերպումը ՀՀՀՀ-ում (ընդունելության քննություններ, ֆակուլտետներ, դիպլոմներ, ուսանողական կյանք և այլն):

Ուսումնական հաստատությունների տնօրենների հետ հանդիպման ժամանակ արծարծվող թեմաները վերաբերում են դպրոցների և ՀՀՀՀ-ի կրթական ծրագրերին: Ըստ կոնկրետ օրինակի. 10, 11, 12-րդ դասարանների աշակերտների համար ուսանողական օրերի կազմակերպումը ՀՀՀՀ-ում, որի ընթացքում նրանք մեկ օր գտնվում են համալսարանական միջավայրում և ուսանողների հետ մասնակցում են մասնագիտական դասընթացներին:

Հայկական քոլեջների և դպրոցների աշակերտների հետ հանդիպումներին ՀՀՀՀ-ի թիմը առավելապես մանրամասնել է.

- Կազմակերպումն ու դասերը ՀՀՀՀ-ում (ֆակուլտետների և դիպլոմների ներկայացում),
- 4 ուսումնական տարիների ընթացքում ՀՀՀՀ-ի առաջարկած մասնագիտական պրակտիկան,
- Հետազոտությունները ՀՀՀՀ-ում և Դոկտորական կրթական ծրագիրը,
- Հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները,
- Համալսարանական ուսման մեջ հաջողության հասնելու համար անհրաժեշտ աշխատանքային մեթոդները (ընդհանուր գիտելիքներ, գրառումներ, հաշվետվություններ, ձեռնարկների պատրաստում և այլն),
- Խորհուրդներ ՀՀՀՀ-ի ընդունելության քննություններին հաջողելու համար:

Ընդհանուր հաշվով այցելություն է եղել 9

մարզերի 76 դպրոց՝ մայրաքաղաքից առավել հեռավոր դպրոցների համար առաջնահերթ տեղեկատվություն տրամադրելու համար: ՀՀՀՀ-ի թիմի ինտերակտիվ ու դինամիկ ներկայացումը լավ է ընդունվել դպրոցների տնօրենների, ուսուցչական կազմի և աշակերտների կողմից, ովքեր այդպիսով պատկերացում են կազմում իրենց մասնագիտական ապագայի վերաբերյալ:



Ընդհանուր հաշվով այցելություն է եղել 9 մարզերի 76 դպրոց՝ մայրաքաղաքից առավել հեռավոր դպրոցների համար առաջնահերթ տեղեկատվություն տրամադրելու համար:

ԱՅՑԵԼԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ



Նույն ենթատեքստում 2018-2019-ին, ՀՀՀՀ այցելություններ կազմակերպելու շնորհիվ, հանրակրթական դպրոցներից ու քոլեջներից եկած շուրջ 100 աշակերտ կարողացան բացահայտել համալսարանը.

- Նորավանի միջնակարգ դպրոց
- Հրազդանի N13 ավագ դպրոց
- ԱՅԲ դպրոց
- Արմավիրի N 4 դպրոց
- Էջմիածնի «Էօրնեկեան» դպրոց
- «Փոքրիկ Իշխան» դպրոց



10

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՑՔՆԵՐ

ՀՀՀՀ-ի 2017-2022թթ. ռազմավարական ծրագիրը կառուցված է 5 առանցքի շուրջ: Այն ստորագրվելուց 3 տարի անց էլ ՀՀՀՀ-ն կենտրոնացած է իր զարգացման առանցքների վրա: Միակ կարևոր բանը, որ ավելացել է համալսարանի զարգացման գործում, դա նոր տարածքն է և UFAR 20+ կամպուսը, որը կլինի գործունեության հաշվետվության առանձին գլխի թեմա, որը, բնականաբար, իր տեղն է գտնում համալսարանի երկարատև տեսլականում: Ժամանակի ընթացքում ՀՀՀՀ-ի կերպարը

ծավալվում է որպես խիստ, պահանջկոտ համալսարան՝ չվարանելով առաջ քաշել քննակեղծիքի դեմ պայքարը որպես կայացման գերակայություն՝ տեղյակ լինելով իր շրջանավարտների աշխատունակության մասին և անսալով տնտեսական դերակատարներին:

ԱՌԱՆՑՔ 1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆ

2018-2019-ին ՀՀՀՀ-ն դոկտորանտների թվի աճ արձանագրեց: Նրանք թվով 13 են, և մեծամասնությունը համագործակցում է Լիոնի դոկտորական դպրոցների հետ: Այս թեզերի ֆինանսական փաթեթը հենված է ՀՀՀՀ-ի արտաքին աջակցության վրա, մասնավորապես՝ Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության, Ֆրանկոֆոնիայի 21F միջազգային ինստիտուտի, Հայաստանի ֆրանկոֆոն փաստաբանների միության, Կենտրոնական բանկի, Կեղծ դեղերի դեմ

պայքարի հետազոտական ինստիտուտի (IRACM) շնորհիվ: Յուրաքանչյուր նոր թեմա ենթադրում է ֆինանսական գործընկերության որոնմանն ուղղված աշխատանք, ինչպես նաև համաֆինանսավորում համալսարանի սեփական միջոցներից: Պետք է զգոն լինել իրավաբանների և մենեջերների միջև հավասարակշռված հարաբերակցությունը պահպանելու համար, քանի որ իրավաբաններն ավելի հակված են ատենախոսության իրականացմանը: Ի վերջո, ինչպես արդեն նշեցիք, այս ուսանողներից ոմանք կլինեն ՀՀՀՀ-ի ուսուցչական կազմում և, այդպիսով, կմասնակցեն կառույցի զարգացմանը: Որպես դոկտորանտ բոլորը մի քանի ժամ դասավանդում են ՀՀՀՀ-ում, ինչը թույլ է տալիս աշխատել դոկտորանտուրայի մանկավարժական բաղադրիչի վրա:

Առայժմ մենք ապահովում ենք, որ ուսանողները պատշաճ կերպով շարունակեն իրենց վերապատրաստումը և աջակցեն իրենց ատենախոսությանը՝ ֆրանսիական դոկտորական դպրոցների պահանջներին համապատասխան: Մենք պետք է ունենանք մեր առաջին դոկտորանտներին 2020թ. հունվարին, այնուհետև նրանք ինտեգրվելու են ՀՀՀՀ-ի դասախոսական կազմին և Լիոնից որոշ գործընկերների փոխարեն իրենց վրա են վերցնելու ֆրանսերեն լեզվով ասպիրանտուրայի դասավանդման մի մասը:



ԱՌԱՆՑՔ 2 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Աշխատում ենք արդիականացնել մեր կառավարման գործընթացը, մասնավորապես՝ բարելավելով թիմերի հմտությունները Էրազմուս+ Կարողությունների զարգացման այն ծրագրերի միջոցով, որոնց համար մենք պատասխանատու ենք: Այնուամենայնիվ պետք է ընդունել, որ ՀՀՀՀ-ն այս ոլորտում

բարելավման զգալի տեղ ունի: Դա համալսարանի համար կարևոր է, որպեսզի կարողանանք դիմակայել առաջիկա 5 տարիների ուսանողների մեծ հոսքին, որի արդյունքում համալսարանը կունենա 2000 ուսանող: Գալիք տարին ՀՀՀՀ-ի հավատագրման տարին է հայկական պարտավորությունների մասով, որը պետք է մեզ դրդի արագացնել մեր վերափոխումները:

ԱՌԱՆՑՔ 3 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա (ԻԿՄ) ֆակուլտետի բացումը մեծագույն գործ է ՀՀՀՀ-ի համար: Այն համալսարանին թույլ է տալիս բաց չթողնել Հայաստանում SS ոլորտի թուլացումը, որը

Համաշխարհային բանկի տվյալներով 4 տարվա ընթացքում կկռնի ՀՆԱ 20% -ը: Փոլ Սաբատյե Թուլուզ 3 համալսարանի, ԻՐԻՏ-ի, Գիտությունների ակադեմիայի, ԹՈՒՄՈ-ի հետ այս նոր գործընկերությունը ստեղծում է ծայրաստիճան դրական Էկոհամակարգ, որը թե ներքին, թե արտաքին ազդեցություն է թողնում համալսարանի վրա:

ԻԿՄ ֆակուլտետի առաջին հոսքի ուսանողների թիվը փոքր էր՝ հաշվի առնելով այս տարվա շրջանավարտների քիչ քանակը (Հանրակրթաան դպրոցների անցումը 10 ամյա կրթությունից 12-ի), բայց 2019թ. ուսումնական տարում ունեցանք արդեն 45 ուսանող: Տարվա ընթացքում կատարված աշխատանքի ընդունման ուսումնասիրությունների առումով ուսումնասիրությունը կատարվել է ավարտելուց 3 տարի անց՝ մագիստրատուրայում ուսումը շարունակելու դեպքերը նվազագույնի հասցնելու համար: Ունեցած տվյալները վկայում են շրջանավարտների

աշխատանքի ընդունման շատ լավ արդյունքների մասին՝ հաստատելով, որ Նոր տեխնոլոգիական ոլորտը հանդես է գալիս որպես ՀՀ-ի շրջանավարտների երկրորդ գործատուն: Փաստաբանները, մենեջերներն ու շուկայավարողները լավ են աշխատում տվյալ աշխատանքային ոլորտում: Գալիք տարվա համար ՀՀ-ն պետք է կայունացնի իր ԻԿՄ ոլորտը և դիմակայի տարածքների խնդիրն՝ ապահովելով դրա ներքին աճը: Կրթական ոլորտները, ինչպիսիք են Կիրառական մաթեմատիկան կամ Զբոսաշրջությունը, պետք է արագ դիտարկվեն

ԱՌԱՆՑՔ 4 ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՎԶՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանկոֆոնիայի XVII-րդ գագաթնաժողովը կարևոր էր՝ իր Նախապատրաստական աշխատանքներով: Ավելի քան 40 ուսանող ներգրավված էին Ֆրանկոֆոն պատվիրակություններին ուղեկցելու գործում՝ կարևորելով ՀՀ-ի, ինչպես նաև Հայաստանում հյուրընկալության որակը: Ակներև է, որ այդ շաբաթվա ընթացքում ծեռք բերած կապերը ծառայում են ՀՀ-ի ողջ ֆրանկոֆոն անձնակազմի գրավչությանը՝ Նպատակ ունենալով դառնալ Կովկասի ֆրանկոֆոն համալսարանական հարթակ: ՀՀ-ում գործող Հայաստանի Սենգորի անվան Ֆրանկոֆոնիայի ամբիոնի գործունեության շրջանակում մեծ աշխատանք է կատարվել: Ֆրանկոֆոն աշխարհում կանանց վերնախավի վերաբերյալ Ֆրանկոֆոնիայի միջազգային

կազմակերպության գլխավոր քարտուղար՝ տիկին Միշել ԺԱՆԻ ներկայությամբ սեպտեմբերին կազմակերպված գիտաժողովը շատ արդյունավետ էր: ՀՀ-ը շարունակում է հայկական հողի վրա և Կովկասում հաստատված լինել որպես Ֆրանկոֆոնիայի գլխավոր օպերատոր: Մեր Նպատակն է ՄԲՐ20+ Նախագծի շրջանակում ընդունել Հայաստանում օտարերկրացի ուսանողներ և ուղղորդել նրանց դեպի ֆրանկոֆոնիա: Մեր առաջնահերթ թիրախներն են Իրանը, Հնդկաստանը (ակնհայտորեն ներկա են Հայաստանում), Չինաստանը:




ԱՌԱՆՑՔ 5 ՀՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ԵՎ ՀԱՆՐԱՀՈՋԱԿՈՒՄԸ

Ամեն տարի շուրջ 200 ուսանող գալիս են համալրելու Հայաստանում ֆրանկոֆոնիայի շրջանակը: «ՀՀ շրջանավարտներ» հիմնադրամի արդյունավետ աշխատանքը բավարար չէ և մենք իրականում դժվարանում ենք հետևել և պահպանել այս համայնքի ակտիվությունը ՀՀ-ից դուրս:

Այս գործում կա առաջընթացի չափազանց կարևոր բացթողում, որը պահանջում է կատարել վերլուծություն՝ պարզելու թե կոնկրետ ինչ կարող է այս հիմնադրամը բերել երիտասարդ շրջանավարտներին: Մեզ համար ՀՀ շրջանավարտների ցանցի ազդեցությունը Նույնքան էական է, որքան ֆրանսիական մեծ դպրոցների ցանցերը: ՀՀ-ի շրջանավարտ լինելը հիմք է մասնագիտական կյանքում ինտեգրվելու համար, ՀՀ-ի ցանցի անդամ լինելը պետք է դիտվի որպես հիմնական առավելություն կարիերան կառուցելու համար:



Եզրափակելու հարկ է նշել, որ 2018-2019 թվականը հազեցած տարի էր բոլոր առումներով: 2018 ֆինանսական տարին բուհերի համար դժվարին տնտեսական համատեքստում ստեղծեց հարկի հաշվից 2.1% զուտ գործառնական եկամուտ, ինչը վկայում է ՀՀ-ի տնտեսական մոդելի վարպետության մասին իր կառավարման և դրա ակնկալիքների մեջ: Ամիս առ ամիս մենք տեսնում ենք, որ Նոր շենքի անհրաժեշտությունը դառնում է առաջնահերթություն համալսարանի համար և որ ՄԲՐ20+ Նախագծի իրագործումը հավանական է առաջիկա 10 տարիների ընթացքում:



11

UFAR20+ ԿԱՄՊՈՒՍ

ՀՖՀՀ-ի ՆԵՐԿԱՅԻՍ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ներկայումս ՀՖՀՀ-ը տեղակայված է Երևանի Չեյթուն թաղամասի Դավիթ Անհաղթ 10 հասցում: Ներկայիս տարածքը զբաղեցնում է 4 500մ² ընդհանուր տարածք՝ իր վեց հարկերով և նկուղով: 2017 թվականին շենքը գնահատվել է 693 000€ լիազորված մարմնի կողմից:

4500մ² մակերեսով ներկայիս շինությունն ունի 6+1 (նկուղային) հարկ: 2017թ.-ին շենքը հավատարմագրված կառույցի կողմից գնահատվել է 693 000€: ԽՍՀՄ շրջանում կառուցված այս նախկին հանրակացարանը վերանորոգվել է 2000թ.-ին՝ ուսումնական տարածք դառնալու նպատակով: Չնայած առկա նյութատեխնիկական պայմաններին՝ շինությունն ունի հետևյալ թերությունները՝

- Ավելի քան 200մ² մակերեսով տարածքների ձայնամեկուսացման բացակայություն - Դահլիճ-լսարանների պակաս,
- Ընդհանուր օգտագործման տարածքների,

օրինակ՝ սրճարանի բացակայություն, որի պատճառով գրադարանը վերածվում է հավաքատեղիի - Ադմինիստրատիվ սենյակների անբավարարություն, մասնավորապես՝ հրավիրված ֆրանսիացի դասախոսներին ընդունելու համար,

- Սեյսմակայունության չափանիշներին ա ն հ ա մ ա պ ա տ ա ս ի ս ա ն ո լ թ յ ո ն ՝ Համալսարանի կառուցվածքային թերությունների շարքը լրացնում է ամեն ուսանողին հասանելիք տարածքի ցուցանիշը՝ 3,75մ²: Ֆրանսիայի համալսարաններում միջին ցուցանիշը մեկ ուսանողի համար տատանվում է 5-ից 10մ²-ի միջև (5 մ² մասնավորապես Փարիզում բնակչության քանակի պատճառով):



3,75մ² մեկ ուսանողի համար



7 մ² մեկ ուսանողի համար

Մինչ ներկայիս տարածքը անբավարար է դառնում 1100 ուսանողի համար, աշխատակազմի մեխանիկական աճը նույնպես անհնարին է դարձնում ՀՖՀՀ-ի գործունեությունը այս շինությունում: Ըստ Նախապատրաստական դասընթացներին գրանցված ուսանողների թվի և այլ գնահատումների՝ համալսարանը մինչև 2024թ.-ը կունենա 1700-ից 2000 ուսանող՝ չհաշված հնարավոր օտարերկրացի ուսանողներին: Որպես հիմք վերցնելով 1700 ուսանող և յուրաքանչյուր ուսանողի համար 7մ² տարածք վարկածը՝ անհրաժեշտ ընդհանուր մակերեսը պետք է կազմի 11 900մ², որն ավելին է ներկայիս մակերեսի կրկնապատիկից: Ահա թե

ինչու է ՀՖՀՀ-ի համար անխուսափելի տեղափոխվելը նոր շենք՝ ավելի ընդարձակ և ավելի որակյալ ենթակառուցվածքով: Հարկ է նշել՝ արդեն Նախատեսված է 2018թ. սեպտեմբերին բացված հնֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա ֆակուլտետի տեղայնացումը: Նշենք նաև, որ 2018թ.-ին բացված հնֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի գործունեությունը Նախատեսված է ԹՈՒՄՈ կենտրոնի հետ համատեղ իրականացվող Convergence կենտրոնում 2 000 մ² տարածք, որտեղ կսովորեն 400 ուսանող:



UFAR20+ ՆԱԽԱԳԻԾ



Նախատեսվող սցենարը փաստորեն 12 000մ² տարածքի կառուցումն է: Շենքի կոնցեպցիան պետք է բավարարի երկու պահանջի՝

- մի կողմից՝ տարածքը պետք է լինի ավելի ճկուն օգտագործման համար:

Օրինակ՝ 250 մ² մակերեսով լսարանները պետք է կարողանան բաժանվել առանձին լսարանների շարժական պատերի միջոցով:

- մյուս կողմից՝ Նախագիծը պետք է ուղղված լինի դեպի կայուն զարգացման փոխօգնություն և առաջարկի Էներգախնայության Նորագույն լուծումներ: Շինության մեծ մասը (42%) պետք է Նախատեսված լինի ուսումնական գործընթացի համար:

ՆԱԽԱԳԾԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

Շինարարական աշխատանքների մեկնարկը Նախատեսված է 2020թ.-ին. Convergence կենտրոնն իր առաջին ուսանողին պետք է ընդունի 2021թ.-ի սեպտեմբերին: Նախագծի իրագործումն ու ղեկավարումը մեծ մասամբ հանձն կառնի ՀՖՀՀ-ի ներկայիս ադմինիստրատիվ անձնակազմը: Տեխնիկական աշխատակիցների, ղեկավարության և հրավիրյալ դասախոսների քանակական աճի անհրաժեշտություն կլինի մասնավորապես միջազգային ուսանողների առկայության դեպքում: Համալսարանի կառավարման որակը տարբերակիչ տարր կլինի այլ հաստատությունների հետ մրցակցության և շրջանավարտների՝

աշխատանք գտնելու հարցերում: Շուկայի և վերջին տասնամյակների փորձի ուսումնասիրությունը թույլ է տվել կատարել ուսանողների թվի կանխատեսումներ: Հաշվի առնելով օտարերկրացի ուսանողներին և ակադեմիական արդյունքների անբավարարության պատճառով համալսարանից դուրս մնացող ուսանողներին՝ համալսարանը կարող է ունենալ 2000 ուսանող Նախագծի մեկնարկից վեց տարի անց:

Համակարգչային տեխնիկայի Նորացումն ու ծրագրային ապահովումը կիրականացվեն Նախագծի 4-րդ տարվա ընթացքում: Ուսման վարձից ստացված եկամուտը կհատուցի Նախնական Ներդրման և վարկի մի մասը:

ՆԱԽԱԳԾԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Անհրաժեշտ Նախնական Ներդրման չափը հաշվարկվել է ըստ տարածաշրջանում այլ համալսարանների կառուցման Նախագծերի, շինարարության միջին գների գործակիցների և ուսանողների քանակի: Ըստ այս գնահատումների՝ անհրաժեշտ Ներդրումը կազմում է 13 միլիոն եվրո: Նախնական Ներդրումն ու բավարար կանխիկ գումարը Նախագծի իրականացման ընթացքում ճիշտ համադրելու համար ֆոնդը կմատակարարվի երկարաժամկետ պարտքի միջոցով՝ 5% կանխատեսվող տոկոսադրույքով: Մարումը հնարավոր կլինի իրականացնել տասից տասնհինգ տարվա ընթացքում:

Նախագիծն ունի դրական ՉՆԱ: Ներքին հատույցի դրույքի 10% տոկոսն ավելի բարձր է, քան զեղչատոկոսը, ինչը Նշանակում է, որ Նախագիծը տնտեսագիտական առումով կենսունակ է և եկամտաբեր:

ՀՀՀ-ի հովանավորներ



12

ՀՈՎԱՆԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀՀ-ն հենված է ֆրանկոֆոնիայի մեջ ներգրավված ինստիտուցիոնալ օպերատորների, ինչպես նաև հովանավորների հետ երկարամյա համագործակցության վրա: Վերջիններիս ֆինանսական աջակցության շնորհիվ իրականացվում է դոկտորանտների դասընթացների կազմակերպումը, սոցիալական օգնություն և գերազանցության կրթաթոշակը:

-ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում ֆրանսիայի դեսպանությունը սոցիալական և ներդրումային դրամաշնորհների համար ՀՀՀ-ին տրամադրում է 110.000 € դրամաշնորհ: Եվրոպայի և արտաքին գործերի նախարարությունը ֆինանսավորում է նաև ՀՀՀ-ի ռեկտորի աշխատավարձը:

ԺԱՆ ՄՈՒԼԵՆ ԼԻՈՆ 3 ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանը տրամադրում է մանկավարժական և 100 000 € ֆինանսական աջակցություն ավելի քան 60 դասախոսական գործուղումների համար: Իր պատմական գործընկերոջ հետ ունեցած պարտավորությունների շրջանակներում ՀՀՀ-ն ստանձնեց մանկավարժական գործուղումների մասնակի ֆինանսավորումը մինչև 40 000 €:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՒԹՅՈՒՆ

ՀԲԸՄ-ն աջակցում է ՀՀՀ-ին տարեկան մինչև 70 000€-ի թափաթիվ

գործառույթների, կրթաթոշակների և ֆրանսիայում ուսանողների պրակտիկային տրամադրվող միջոցների համար: Հայտնում ենք մեր երախտագիտությունը ամբողջ անձնակազմին, մասնավորապես՝ Թալար Կազանճեանին, Վազգեն Յակոբյանին, Նադյա Գործունյանին, Ժակ Կարապետյանին:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆԿՈՒ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄՈՒԹՅՈՒՆ

Միությունը ամեն տարի տրամադրում է 5000€ սոցիալական նպաստի համար: Հիմնադիր՝ պարոն Ռեյմոն Յեզեգելիան, Նախագահ՝ դատավոր Մարտին Փանոսյան:

ՌՈՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ

2018-2019 ակադեմիական տարվա համար Դատավոր Ռոյ Առաքելյանը 5000€ հանգանակություն է արել իրավաբանական ֆակուլտետի ուսանողների կրթաթոշակի համար (ըստ առաջադիմության և սոցիալական չափանիշների):

ԴՐԱՄԱՀԱՎԱՔ UFAR20+ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ

2018-2019 ակադեմիական տարին հատկապես կարևոր էր հովանավորության առումով, քանի որ Համալսարանը միջազգային դրամահավաք է կազմակերպել իր նոր UFAR20+ կամպուսի շինարարության համար: Այդ դրամահավաքի շրջանակներում հավաքվել են 1,160,000€ նվիրատվություններ և խոստումներ:

ԻՆ ԴԵ ՖՐԱՆՍ ՇՐՋԱՆ

Ի՛ն ԴԵ Ֆրանս շրջանի նախագահ տիկին Վալերի Պեկրեսը 2019թ. փետրվարի 5-ի Օդային ուժերի համայնքային քուլեջի (CCAF) ամենամյա ընթրիքի ժամանակ հայտարարեց, որ շրջանը միտված է 500 000€ աջակցություն ցուցաբերել UFAR20+ նախագծին:



ՄԻՇԵԼ ԴԱՎՈՒԴԻԱՆ

Միշել Դավուդիանը, SS ոլորտի ձեռնարկատեր և Infodis և Apaga Technologies-ի հիմնադիրը, խոստացել է 20 000€ նվիրատվություն նոր կամպուսում SS լսարանի ֆինանսավորման համար:



Ingénierie des S.I.

WEB-ISI

Web-ISI- ն իր գործադիր տնօրեն Արմեն Մնացականյանի հետ առաջին ֆրանսիական ընկերությունն էր, որը աջակցեց SS ոլորտի նոր ուսումնական նախագծին. Web-ISI կայքի ստեղծումն ու սպասարկումը, ՀՖՀՀ-ի գալա ընթրիքի համար տոմսարկղի իրականացումը կատարվել է Web-ISI թիմերի կողմից :

ՎԻԳԵՆ ՓԱՓԱԶՅԱՆ

Վիգեն Փափազյանը՝ Infodis գրուպի գործադիր տնօրենը, կատարել է 20 000€ նվիրատվություն նոր կամպուսում SS լսարանի ֆինանսավորման համար:

UFAR20+-Ի ԲՈԼՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԸ

(նվիրատվություններ և դրանց խոստումներ այբբենական կարգով)


ԱԶԳԱՆՈՒՆ/ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	ԱՆՈՒՆ	ԵՐԿԻՐ
ԱՖՖԱ		
ԱՂԱՋԱՆՅԱՆ	ՀՈՎՀԱՆՆԵՍ	ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ
ԱՃԵՄԻԱՆ	ՍԱՐԻՆ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՄԻՐՅԱՆ	ԱՐԵՎԻԿ	ՖՐԱՆՍԻԱ
ԷՅ-ԷՆ ԱՌԻԴԻՏ		ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՐՇԱԿՅԱՆ	ԱՆԻ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՏՏԱՄԻԱՆ	ՏԵՐ և ՏԻԿԻՆ ԷԴՈՒԱՐԴ/ ՍՈՆԱ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՅԴԱԲԻՐՅԱՆ	ՈՐԲԵՐՏ ԵՎ ՀԵՐՄԻՆԵ	ՖՐԱՆՍԻԱ
ԲԱԲԼՈՅԱՆ (ԱՐԱԲԿԻՐ ԲԿ)	ԱՐՄԱՆ	ՖՐԱՆՍԻԱ
ԲԱԳԴԻԿԻԱՆ	ԱՆՏՈՒԱՆ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԲԱՂԱՍԱՐՅԱՆ	ԳԵՎՈՐԳ	ՖՐԱՆՍԻԱ
ԲԵԴՈՆՈԳԼՈՒ	ԳՐԵԳՐԻ	ԼԵՀԱՍՏԱՆ
ՍՈՖԹԿՈՆՍՏՐԱԿՏ		ՖՐԱՆՍԻԱ
ԲՈՒԼԱՆԺԵ	ԼՈՐԱՆ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՇԱՀԻՆՅԱՆ	ՄԻՇԵԼ	ՖՐԱՆՍԻԱ
ՉԱՎՈՒՇՅԱՆ	ԿԱՐԻՆԵ	ՖՐԱՆՍԻԱ
ՉՈՒԿՈՒՐԻԱՆ	ԼԻԼԻԱՆ ՇԱՌԼՈՏԱ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԿՈԵՆ ՀԱԴԱԴ	ԲԵՐՆԱՐ	ՖՐԱՆՍԻԱ
ՓՄՁ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ ՓԱՐԻԶ ԻՆ ԴԵ ՖՐԱՆՍ		ՖՐԱՆՍԻԱ
ԴԱՄԻԼԱՄԻԱՆ	ՍԻԼՎԻԱ	ՖՐԱՆՍԻԱ
ԴԱՎՈՒԴԻԱՆ	ՄԻՇԵԼ	ՖՐԱՆՍԻԱ
ԴԵՄԻՐՃՅԱՆ	ՍՈՍԻ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԴԵՐՄԱՆՈՒԿՅԱՆ/ՍՏԵՖԱՆԻ	ԺԱՆՆԱ	ՖՐԱՆՍԻԱ
ԴԵՅՐՍԵՆՋՅԱՆ	ԺԱԿ	ՖՐԱՆՍԻԱ

ԱԶԳԱՆՈՒՆ/ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	ԱՆՈՒՆ	ԵՐԿԻՐ
Էներգիա	ԺԱՆ ՄԻՇԵԼ և ՊԱՏՐԻՍԻԱ	ՖՐԱՆՍԻԱ
ՖԱՏԻՄԻ	ԼԱՌԱ	ՖՐԱՆՍԻԱ
G2IA		ՖՐԱՆՍԻԱ
ԳԱՆԴՐԻՈ	ԲԱՐԲԱՐԱ	ՖՐԱՆՍԻԱ
ԳԱՐԲՈՒՇՅԱՆ	ԱՐԱԶ	ՖՐԱՆՍԻԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ	ԱՐՏՅՈՄ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՂԱԶԱՐՅԱՆ	ԱՌԱՔԵԼ և ԼԻԴԻԱ	ՖՐԱՆՍԻԱ
ԳԵԿՈՐԳՅԱՆ	ՆԱՐԻՆԵ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՈՐԾՈՒՆՅԱՆ	ՆԱԴԻԱ	ՖՐԱՆՍԻԱ
ԳՈՎՍԻՅԱՆ	ԱԼԵՔՍԻՍ	ՖՐԱՆՍԻԱ
ԳՐԱՆՏ ԹՈՐԹՆՈՆ		ՖՐԱՆՍԻԱ
ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԱՐԱՄ	ՖՐԱՆՍԻԱ
ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԱՐԹՈՒՐ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԳԵԴԻԿՅԱՆ	ԺԱԿ և ԱԻԴԱ	ՖՐԱՆՍԻԱ
ՀԱԳՊՅԻԱՆ (ԹՈՐՈՍ ՈՐՍԼԻՆ)	ԺԱՆ ԺԱԿ	ՖՐԱՆՍԻԱ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ	ԱԼԵՆ և ՆՈՐԱ	ՖՐԱՆՍԻԱ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՎԱՐԱԶԴԱՏ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ԴԻԱՆԱ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՈՎԻԼ	ՖՐԱՆԿ	ՖՐԱՆՍԻԱ
ՀԵԹԻՄՅԱՆ	ՐԱՖՖԻ	ՖՐԱՆՍԻԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՀՈՎՀԱՆՆԵՍ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՈՎՆԱՆՅԱՆ	ԼԵՎՈՆ	ՖՐԱՆՍԻԱ
ՀՈՎՍԵԹՅԱՆ	ՍՈՍ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԻԼ ԴԵ ՖՐԱՆՍ		ՖՐԱՆՍԻԱ
ԻՆԶԻԱՆ	ՊԱՏՐԻԿ	ՖՐԱՆՍԻԱ
ԺԱՄԻԱՆ	ՖԻԼԻՊ	ՖՐԱՆՍԻԱ
ԺՈՒԼՖԱՅԱՆ	ՌՈՒԶԱՆՆԱ	ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԶԳԱՆՈՒՆ/ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	ԱՆՈՒՆ	ԵՐԿԻՐ
ՔԱՄԱԼՅԱՆ	ՌԱՖԱՅԵԼ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԿԱՐԱԺԻԱՆ	ԳԱԲՐԻԵԼ	ՖՐԱՆՍԻԱ
ԿԱՐԱԺԻԱՆ	ՈՒԲԵՐ	ՖՐԱՆՍԻԱ
ԽԻԹԱՐՅԱՆ	ԴԱՎԻԹ	ՀԱՅԱՍՏԱՆ
ԿՍՊՈՅԱՆ	ԼՈՒՍԻՆԵ	ՖՐԱՆՍԻԱ
ՔՈՒՐՔՉՅԱՆ	ԴԱՆԻԵԼ	ՖՐԱՆՍԻԱ
ՔՈՒՐՔՉՅԱՆ	ԱՆԻ	ՖՐԱՆՍԻԱ
ԼԱՎԵՍՏ	ԺԱՆ ՄԱՐԿ	ՖՐԱՆՍԻԱ
ՄԱԿԱՐՅԱՆ	ԼԻԱՆԱ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ	ՄԱՐԻՆԵ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՄԱՐՏՅԱՆ	ՌՈՒԶԱՆՆԱ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՄԵԼԻՔՅԱՆ	ԼԵՅԼԻ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՄԵԼՔՈՆՅԱՆ	ՄԱՂԵՆ և ՄԻՆԱՍ	ՖՐԱՆՍԻԱ
ՄԵԼՔՈՆՅԱՆ	ՄԻՆԱՍ	ՖՐԱՆՍԻԱ
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ	ՀԵՂԻՆԵ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՄԵՅՐՈՅԱՍՏԱՆՅԱՆ	ՎԱՂԱՐՇԱԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ	ՎԱՐԴՈՒՀԻ	ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ	ՀԱՅԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ	ԳԱՅԱՆԵ	ՖՐԱՆՍԻԱ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ	ԱՐՄԱՆ	ՖՐԱՆՍԻԱ
ՄՈՒՐԱԴՅԱՆ	ՎԻԿՏՈՐ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՆԱԶԱՐՅԱՆ	ՍԱՄՈՒԵԼ	ՖՐԱՆՍԻԱ
ՆԱԿՈՅԱՆ	ԱՐԱՅԻԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՕԶԱՐԱՐԱՏ	ԴԱՎԻԴ	ՖՐԱՆՍԻԱ
ՊԱՊԱԴԱԿՍԻ ՍՏԵԹԱՆՈՊՈԼԻ	ԷՄԱՆՈՒԵԼ	ՖՐԱՆՍԻԱ
ՓԱՓԱԶՅԱՆ	ՎԻԳԵՆ	ՖՐԱՆՍԻԱ

ԱԶԳԱՆՈՒՆ/ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	ԱՆՈՒՆ	ԵՐԿԻՐ
ՓԱՃՈՒՄՅԱՆ	ՄԻՇԵԼ	ՖՐԱՆՍԻԱ
ՊԻԵՐ	ԺԱՆ ԼՅՈՒԿ	ՖՐԱՆՍԻԱ
ՊԻՐԱՆ	ԱՔՍԵԼ	ՖՐԱՆՍԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑ		ՀԱՅԱՍՏԱՆ
ՂՈՒՄԵԼԻԱՆ	ՕԼԻԿԻԵ	ՖՐԱՆՍԻԱ
ՂՈՒՍՍԵ	ՊՈԼ	ՖՐԱՆՍԻԱ
ՍԱԲԵՐԱՏՈՒՐ ՍԵՎԱՆ		ՀԱՅԱՍՏԱՆ
ՍԱՐԳՍՅԱՆ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՍԵՆԵԼԼԱՐ	ՍՅՈՒԶԱՆՆԱ	ՖՐԱՆՍԻԱ
ՇՆՈՐՈԿԻԱՆ	ՍԱՄ	ՖՐԱՆՍԻԱ
ՍԻՐԱՊԻԱՆ	ԺԱՆ	ՖՐԱՆՍԻԱ
ՍՈՒԶՅԱՆ	ՀՐԱԳ և ԱՌԻԵԼԻԱ	ՖՐԱՆՍԻԱ
ԹԱՄԲԱԼՅԱՆ	ՆԱՐԵԿ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՏԱԿԵՐՆ	ՎԻՐԺԻՆԻ	ՖՐԱՆՍԻԱ
ԹԵՐԶԻԱՆ	ԺԱԿ	ՖՐԱՆՍԻԱ
ԹՈՓԱԼՅԱՆ	ՇՈՂԻԿ	ՖՐԱՆՍԻԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ	ԳԱՅԱՆԵ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՎԱՐՏԱՆՅԱՆ	ՆՈՌԱ	ՖՐԱՆՍԻԱ
ՎԵՐԴՅԱՆ	ԱՐՄԵԼ	ՖՐԱՆՍԻԱ
ՈՍԿԱՆՅԱՆ	ՏԻԳՐԱՆ	ԱՄԷ
ՎԱՐԴԱՆՅԱՆ	ՐԱՖՖԻ	ՖՐԱՆՍԻԱ
WEB-ISI		ՖՐԱՆՍԻԱ
ՅԵՍԱՅԱՆ	ԱՐԱՄ	ՀԱՅԱՍՏԱՆ
ՅԵԶԵԳԵԼԻԱՆ	ՌԵՅՄՈՆ	ՖՐԱՆՍԻԱ
ԶԵԼՎԵՅԱՆ	ԶՐԻՍՏՈՖ	ՖՐԱՆՍԻԱ





13

ՏԱՐԿԱ ՀԻՇԱՐԺՄԱՆ ՊԱՀԵՐ

11-12-Ը ՍԵՊՏԵՄԲԵՐ 2018թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՐՈՎ: «ԿԱՆԱՆՑ ԿԵՐՆԱԽԱՎԸ ՖՐԱՆԿՈՖՈՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ: ԿԱՆԱՅԶ, ՈՐՈՆՔ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ԿԵՐՏԵԼ ԱՌԱՎԵԼ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ»

Կազմակերպված ՀՀՀ-ի Սենգորի ամբիոնի, Ֆրանկոֆոնիայի միջազգային ինստիտուտի (2IF) և Ֆրանկոֆոնիայի միջազգային ամսագրի կողմից՝ Հայաստանում Ֆրանսիայի և Կանադայի դեսպանությունների, Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության (AUF), Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (OIF),

արևմտյան Ֆրանկոֆոնիայի և Ավստրալիայի դպրոցի աջակցությամբ, այս համաժողովի նպատակն էր ֆրանսախոս աշխարհում վեր հանել կանանց վերնախավի սոցիալ-քաղաքական խնդիրները:

Համաժողովի բանախոսներն էին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (OIF) (2015-2019) նախկին քարտուղար տիկին Միշել Ժանը, Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության (AUF) տնօրեն պարոն Մուհամեդ Կետատան, Հայաստանում Լիբանանի դեսպան տիկին Մայա Դադերը, Հայաստանում Կանադայի գործերի պատասխանատու տիկին Աննիկ Գուլե:



2-ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2018

ՀԻՇԱՏԱԿԻ ՔԱՅԼԵՐԹ

և այցելություն Շառլ Ազնավուրի հիմնադրամ, թանգարան՝ հարգանքի տուրք մատուցելու հոկտեմբերի 1-ին վախճանված Շառլ Ազնավուրին:



7-12-ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2018

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018 ՖՐԱՆՍՈՖՈՆԻԱՅԻ XXVII-ՐԴ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ

2018թ. հոկտեմբերի 7-12-ը Հայաստանը հյուրընկալեց Ֆրանկոֆոնիայի XXVII-րդ գագաթնաժողովը, որի թեման էր՝ «Միասին համերաշխության մեջ ապրելը, հումանիտար արժեքների փոխանակումը և բազմազանության հարգումը. Ֆրանսափոս աշխարհի խաղաղության և բարգավաճման աղբյուր», որին եկան մասնակցելու պատվիրակություններ աշխարհի 84 երկրներից: ՀՀ-ն մասնակցում էր այդ իրադարձությանը իր 400 կամավոր ուսանողներով, որոնք ներկայացուցչական բոլոր մակարդակներում կազմել են «soft power» հարթակ:

Դա խոսում էր մասնավորապես մի երկրի մասին, որտեղ ֆրանսերենը պաշտոնական լեզու չէ, բայց որտեղ Ֆրանկոֆոնիայի ոգին ծագում էր աշխարհին բաց, դիմափկ և իր ապագայով մտախոգ երիտասարդությունից:

Ֆրանկոֆոնիայի ավանում ՀՀ-ն ներկայանում էր Ֆրանսիայի տաղավարում՝ աշխատակազմի

և ուսանողների ռոտացիայի միջոցով: Ինչպես նաև, ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվեցին ինտերակտիվ ու խաղային միջոցառումներ և գաղափարների քննարկումներ հանրության հետ:



23-ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2018

ՍԵՆ ԷԹԻԵՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ, ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ

Մնախագահ պարոն Գաել Պերդրիոյի այցը ՀՀ:



19-ը ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2018

ԻԼ ԴԵ ՖՐԱՆՍ ՇՐՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՎԱԼԵՐԻԱ ՊԵԿՐԵՍԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Տարածաշրջանի, ՀԲԸՄ-ի և ՀՀ-ի կողմից կազմակերպված ձեռնարկատիրության ուսուցման մոդուլների մասնակիցներին վկայագրերի շնորհում:



5-Ը ՓԵՏՐՎԱՐԻ, 2019

UFAR20+ ԱՐՇԱԿԻ ՄԵԿԱՐԿԸ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ԷՄԱՆՈՒԵԼ ՄԱԿՐՈՆԻ ԲԱՐՁՐ
ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

2019թ. փետրվարի 5-ին, Փարիզում կազմակերպությունների համակարգող խորհրդի ամենամյա ընթերցի ժամանակ Ֆրանսիայի Նախագահը ազդարարեց UFAR20+ Նախագծի միջազգային դրամահավաքի մասին:

«Հայաստանի երիտասարդության ապագան կրթությունն է Նաև: Հրաշալի օրինակը, որ բոլորս տեսանք Հայաստանում, Հայաստանում ֆրանսիական համալսարանի օրինակն էր, որը մեր համագործակցության զարդերից մեկն է: Նա կրթել է ավելի քան 2000 անթերի ֆրանկոֆոն ուսանող (ամիսներ առաջ տեսանք Նրանց ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին): Այսօր մենք ունենք Նոր կամպուսի Նախագիծ, որով ՀՀ-ն կունենա Նորանոր հաջողություններ, կմիջազգայնացվի՝ բավարարելու համար

Ֆրանսիա և ֆրանկոֆոն աշխարհ ձգտող հայ երիտասարդության կարիքները»: Ընթերցի ժամանակ իլ Դե Ֆրանս շրջանի Նախագահ Վալերիա Պեկրեսը հայտարարեց Նախագծին աջակցելու իր մտադրության մասին:



12-Ը ՄԱՐՏԻ, 2019

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ «ՕՏԱՆԻ
ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ
ՏԵՍԱԿԵՏԸ»

Կազմակերպված Հայաստանի արտաքին գործերի Նախարարության, Հայաստանում ֆրանսիայի դեսպանության և Հայաստանում ֆրանսիական համալսարանի կողմից:



19-Ը ՄԱՐՏԻ, 2019



Groundbreaking – ԹՈՒՄՈՒՄ Convergence
Կենտրոնի հիմնաքարը, որը կգրադեցնի
ՀՀ-ի Ինֆորմատիկայի և Կիրառական
մաթեմատիկայի ֆակուլտետը:

10-12-Ը ԱՊՐԻԼԻ, 2019

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝
«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Կազմակերպված Հայաստանում ֆրանսիայի դեսպանության, Թուլուզի Ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտի, Հայաստանի գիտությունների ակադեմիայի կողմից ՀՀ-ի և ԹՈՒՄՈՒՄ-ի հետ համագործակցությամբ՝ այդ համաժողովը միավորել էր ֆրանսիայի և Հայաստանի գիտական և մասնագիտական ոլորտների ներկայացուցիչներին, քննարկելու համար արհեստական բանականությունը, մեծածավալ տվյալները, կիրառական գիտության և տեխնոլոգիաների արագ զարգացման հետ կապված սոցիալական մարտահրավերները:

28-Ը ԱՊՐԻԼԻ, 2019

ՄՐՏՈՒՅԹ/ՔԱՅԼԵՐԹ ՀՀ-ից ԹՈՒՄՈՒՄ

Հայ ընտանիքներին իրազեկելու և ՀՀ-ի ապագա տեղափոխումը խորհրդանշելու համար կազմակերպվել էր մրցույթ/քայլեր ընդդեմ ՀՀ-ի և ԹՈՒՄՈՒՄ-ի միջև: Ավելի քան 450 մարդ մասնակցեց այդ իրադարձությանը:

12-Ը ՀՈՒՆԻՍԻ 2019թ

ԳԱԼԱ ԸՆԹՐԻՔ ՆԿԻՐԱԾ UFAR20+ ՆԱԽԱԳԾԻՆ



2019թ. հունիսի 12-ին Իլ Դե Ֆրանս մարզային խորհրդի, Ֆրանսիայի ՀԸԲՄ-ի, Ֆրանսիայում հայկական ֆոնդի հետ համագործակցությամբ և Web-ISI ձեռնարկության աջակցությամբ ՀՖՀՀ-ը կազմակերպել էր գալա ընթրիք ի աջակցություն UFAR20+. Նոր կամպուսի կառուցման: Նախագահ Պեկրեսի բարձր հովանու ներքո մարզային խորհրդի տարածքում կազմակերպված ընթրիքին մասնակցած 136 հոգուց հավաքագրվեց մոտավորապես 100 000 եվրո նվիրատվություն և խոստում:



ՀՖՀՀ-Ն՝ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԵՆԱՐԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տարածաշրջանում իրականացվող «ԷկոՏավուշ» ծրագրից բացի Օ դը Սեն գլխավոր խորհուրդը Ֆրանսիայի հայկական հիմնադրամի միջոցով կցանկանար զարգացնել գյուղատնտեսական դասընթացները: Դրաշրջանակներում ՀՖՀՀ-ը AgroParisTech-ի համագործակցությամբ կծառայի որպես օժանդակ կառույց կրթության որակը երաշխավորելու համար: ՀՖՀՀ-ը պատրաստ կլինի մեկնարկել այս ճանապարհով, եթե կայուն տնտեսական մոդել սահմանվի ծրագրի հիմքում՝ դրա կենսունակությունն ապահովելու համար:




14

ԽՈՍՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՑ

«ՀՀՀ-ի շնորհիվ ես բացահայտեցի իմ ողջ ներուժը մասնագիտական ոլորտում և համալսարանի գործունեության սահմաններից դուրս: Դիմելով ՀՀՀ-ի Մարքեթինգի ֆակուլտետ՝ իմ նպատակն էր սովորել լավագույն մասնագետներից և ծանոթանալ ուսանողների աշխատանքային կյանքին: Ես արդեն 4-րդ կուրս եմ և չնայած, որ շուտով ավարտում եմ ուսումս, կարդ եմ վստահաբար ասել, որ փոքրիկ քայլերով հասնում եմ նպատակներիս: Ինչ վերաբերում է հնարավորություններին, որ ընձեռել է ինձ ՀՀՀ-ը, ապա դրանք կծառայեն իմ մասնագիտական զարգացման համար: ՀՀՀ-ն ինձ սովորեցրել է ճկուն կիրառել իմ գիտելիքները գործնականում»:



Նենսի Մկրտչյան, Մարքեթինգի 4-րդ կուրսի ուսանողուհի



«Դեռ մանկուց տարված էի ֆրանսերեն լեզվով և մաթեմատիկայով: Սկզբում ուզում էի սովորել պետական համալսարանում, բայց երբ իմացա, որ ՀՀՀ-ում բացվել է ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ, փոխեցի մտադրությունս և եկա ՀՀՀ համալսարանում իմ երկու սիրելի առարկաները»:


Հրանտ Առաքելյան, ԻՎՄ-ի 2-րդ կուրսի ուսանող

«Ես Էլեն Գրիգորյանն եմ: Սովորել եմ Հայաստանում ֆրանսիական համալսարանի (ՀՀՀ) Մարքեթինգի մագիստրատուրայում ֆրանսիայի Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի հետ համատեղությամբ: Ես ունեմ 10 տարուց ավել փորձ մասնավոր և հանրային ոլորտներում: Մագիստրոսի կոչում ստանալուց հետո ուսումնասիրանալու շարունակելը մտնում էր իմ մասնագիտական ծրագրերի մեջ, քանի որ ցանկանում էի հմտանալ դասավանդման և հետազոտական աշխատանքի մեջ: Այսպիսով, մագիստրատուրան ավարտելիս ինձ հնարավորություն ընձեռնվեց ստանձնել «Ֆուդամենտալ մարքեթինգի» TD դասավանդումը ՀՀՀ-ում, որը ես շատ բարձր գնահատեցի վերջին 6 տարիների ընթացքում: Աշխատելով այս դասերի պատրաստման վրա՝ խորապես հետաքրքրվեցի տարբեր թեմաներով, մասնավորապես՝ «Big Data-ի հնարավորություններն ու մարտահրավերները ձեռնարկությունների համար» թեմայով, որով գրում եմ գիտական թեզ՝ ավարտելով ուսումնական ֆրանս-հայկական դոկտորանտուրայում մտադրություն ունեմ շարունակել դասավանդումը՝ զարգացնելով իմ մասնագիտական կարիերան, ինչպես նաև իմ ակադեմիական հետազոտությունները ի նպաստ Հայաստանի զարգացմանը»:

Էլեն Գրիգորյան, Կառավարման գիտությունների դոկտորանտ

« Հանդիսանալով ՀՀՀ-ի բակալավրիատի շրջանավարտ՝ վայրկյան անգամ չհապաղեցի ընտրել համալսարանը Մագիստրատուրան շարունակելու համար: ՀՀՀ-ը հազվագյուտ համալսարաններից է, որը թույլ է տալիս ձեռք բերել խորը գիտելիքներ և կիրառել դրանք գործնականում, շարունակել ուսումը արտերկրում և դառնալ պահանջված մասնագետ աշխատաշուկայում: ՀՀՀ-ը Հայաստանի լավագույն համալսարաններից է և ունի միշտ թարմացված կրթատեխնիկական բազա: Համալսարանը ուսանողներին աջակցում է նաև աշխատանք գտնելու հարցում ուսման ընթացքում և դրանից հետո: Ահա այն պատճառները, որոնց համար ես ընտրել եմ ՀՀՀ-ը»:

Լաուրա Գյուլամիրյան, Մարքեթինգի մագիստրատուրայի ուսանողուհի





«ՀՀՀՀ-ը ավելին է, քան համալսարան. այն հավասարության մթնոլորտ է, միջազգային շրջապատ, ապագայի հանդեպ վստահություն: ՀՀՀՀ-ի շրջանավարտ լինել, նշանակում է լինել միշտ գործատուների ուշադրության կենտրոնում: Դրանք էին պատճառները, որոնց համար 16 տարեկանում ես ընտրել էի հենց այս համալսարանը: Բարեբախտաբար, ես ճիշտ որոշում էի կայացրել: Դիպլոմս ստանալուց մի քանի օր անց ես գտա իմ առաջին աշխատանքը համալսարանի թիրախավորած ոլորտներից մեկում: Այժմ, ՀՀՀՀ-ը ինձ ուղեկցում է իմ կարիերայի 2-րդ փուլում. ՀՀՀՀ-ի աջակցությամբ գրանցվեցի 492 դոկտորական դպրոց՝ իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ իրավական խնդիրների և արհեստական բանականության վերաբերյալ: Շնորհիվ այսպիսի միջհամալսարանական համագործակցության՝ հնարավորություն ունեմ ֆրանսիական իրականությունից ոգեշնչված լուծումներ առաջարկելու հայկական իրավական աշխարհին»:

Սիմոն Սիմոնյան,
Իրավաբանության ոլորտի դոկտորանտ

Պրոֆեսոր Ժան Մարկ ԼԱՎԵՍ

Ռեկտոր

recteur@ufar.am

+374 10 289750

Դոկտոր Արայիկ ՆԱՎՈՅԱՆ

Արտաքին կապերի և որակի գծով պատասխանատու պրոռեկտոր

vice_recteur@ufar.am

+374 10 249648

Դոկտոր Վաղարշակ ՄԵՅՐՈՅԱՆ

Վարչաֆինանսական տնօրեն

daf@ufar.am

+374 10 249648

Զարուհի ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

Ուսումնական մասի տնօրեն

direction_etudes@ufar.am

+374 60 279664

.....



Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամ

Դավիթ Անհաղթի 10, ք.Երեւան, 0037, ՀՀ

+374 10 249647 / info@ufar.am

www.ufar.am / www.don-ufar.com